

ԿՈՄՅԵՐԻՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 43.

Պ. Գ. ՏԻՄԱՖԵՅԵՎ

ԽՈՐՅՈՒՑԻՆ ՍՈՑԻԱԼԻՍԱԿԱՆ  
ՅԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

===== ՈՒ ՆՐԱ =====  
ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թարգմ. ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ - 1926



9(47)

Կոմերչնական գրադարան № 43.

Պ. Գ. ՏԵՄԱՁԵՅԵՎ

ԽՈՐՃՐԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՈՒ ՆՐԱ

ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թարգմ. Գ. Բ. ՀԱԿՈԲՅԱՆԻ



ՊԱՏՈՒԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ - 1926

A II  
38839

№ 352                                  Գրառելվութ № 350 թ.                          Տիրաժ 4000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

Բոլոր այս հարցերը մեզ համար կարևոր են, իբրև կապիտալիստական աշխարհի գյուղատնտեսական կյանքում Խ. Ա. Հ. Մ.-ի մասնակցությունը պարզող հանգամանքներ։ Մեր հացը, վուշը, մարգանեցը, փայտը, նավթը, մորթիները և այլն—իրենց զարգացման մեջ նույն կարգի ուժեր են, ինչ վոր մեր բանակը, ծովային ու ոդային նավատորմիղը և այլն։

Կանցնի մի փոքր ժամանակ ևս, ու Խ. Ա. Հ Մ.-ն Յեվրոպայի հացի գլխավոր շտեմարանը կղառնա և հնարավորություն կունենա նրան աչքի ընկնող չափով ձու, միս, յուղ, վուշ, շաքար և փայտ բաժին հանել, և այլն և այլն։

Համաշխարհային հեղափոխությունը կնվաճի կապիտալիստական աշխարհի հսկայական տեխնիկական հարստությունները։

Արդյոք ձեռնուու չի լինի, պոտենցիալ հարստություններն իրական դարձնելու նպատակով, այդ ուժերի մի մասը դեպի մեր յերկիրը շարժել։

Բոլոր այս հարցերը—համաշխարհային կարգի հարցերը, չեն կարող մեզ չհուղել։

Յերիտասարդության մեջ աճում են ապագա մասնագետները, աճում են վորակյալ ուժերը։

Հետագայում մեր «ընական աշխարհագրությանը» նրանք մանրամասնորեն կծանոթանան։

Իսկ առայժմ անհրաժեշտ ե գոնե ընդհանուր ծանոթություն նրա մասին, վորը և կտա պրոֆ. Տիմաֆեյկի այս հանրամատչելի, շատ սեղմ գրքույթի ընթերցանությունը։

Բոլոր այս հարցերը մեզ համար կարևոր են, իբրակ կապիտալիստական աշխարհի գյուղատնտեսական կյանքում և. Ա. Հ. Մ.-ի մասնակցությունը պարզող հանգամանքներ։ Մեր հացը, վուշը, մարգանեցը, փայտը, նավթը, մորթիները և այլն—իրենց զարգացման մեջ նույն կարգի ուժեր են, ինչ վոր մեր բանակը, ծովային ու ողային նավատորմիղը և այլն։

Կանցնի մի փոքր ժամանակ ևս, ու Խ. Ա. Հ Մ.-ն Յեվոպայի հացի գլխավոր շտեմարանը կղառնա և հնարավորություն կունենա նրան աչքի ընկնող չափով ձու, միս, յուղ, վուշ, շաքար և փայտ բաժին հանել, և այլն և այլն։

Համաշխարհային հեղափոխությունը կնվաճի կապիտալիստական աշխարհի հսկայական տեխնիկական հարստությունները։

Արդյոք ձեռնուու չի լինի, պոտենցիալ հարստություններն իրական դարձնելու նպատակով, այդ ուժերի մի մասը դեպի մեր յերկիրը շարժել։

Բոլոր այս հարցերը—համաշխարհային կարգի հարցերը, չեն կարող մեզ չհուղել։

Յերիտասարդության մեջ աճում են ապագա մասնագետները, աճում են վորակյալ ուժերը։

Հետագայում մեր «ընական աշխարհագրությանը» նրանք մանրամասնորեն կծանոթանան։

Իսկ առայժմ անհրաժեշտ ե դոնե ընդհանուր ծանոթություն նրա մասին, վորը և կտա պրոֆ. Տիմաֆեյկի այս հանրամատչելի, շատ սեղմ գրքույթի ընթերցանությունը։

## I

Խ. Ս. Հ. Մ. ՏԵՐՐԻՏՈՐԻԱՅԻ.  
ՄԱԿԵՐԵՍԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յերկրագնդի վրա հազիվ թե կարելի լինի գտնել մի ուրիշ յերկիր, վորը բնության տված բարիքներով այնքան հարուստ ոժտված լինի, ինչպես Խ. Ս. Հ. Մ. Ն. Ե (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն), վորի բոնած յերկրամասը հավասար է յերկրագնդի ամբողջ ցամաքի  $\frac{1}{7}$ -ին, և վորն իր տիրապետությունների քանակով յետ է մնում միայն Անգլիայից՝ իր գաղութներով միասին վերցրած։

Միության գլխավոր հարստությունը գյուղատնտեսությունն (հողագործությունն) է տալիս։ Յեզ այդ հասկանալի յեւ Միության բնակչության  $\frac{3}{4}$ -ը գյուղացիներն են, վորոնք գլխավորապես հողագործությամբ են պարապում, և մինչև 1914 թվի պատերազմ աշխարհի բոլոր պետություններից ամենից շատ հաց արտահանել ե Ռուսաստանը, վորի հացն, ըստ արժեքի, արտահանության գլխավոր աղբյուրն եր նաև։

Խ. Ս. Հ. Մ. ի տերրիտորիայի մակերեսի հարստությունների մասին խոսելիս մենք հենց

ամենից առաջ կշոշափենք հողագործության գըլ-  
խավոր մթերքները՝ հացահատիկները, պտղար-  
մատներն ու տեխնիկական բույսերը:

## ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԸ. ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԸ .

1914 թվի պատերազմից առաջ Ռուսաս-  
տանի ցանքսի տարածությունը 103 միլիոն դե-  
սիատին եր (իսկ Խ. Ս. Մ. կ սահմաններում՝  
86 միլիոն դեսիատին) և, իր քանակով, հա-  
մաշխարհային տնտեսության մեջ առաջին տեղն  
եր բռնում։ Մեր ցանքսի տարածությանը փոքր-  
իշատե մոտեցող տարածություն ուրիշ պե-  
տություններից միայն Հյուսիսային Ամերիկայի  
Միացյալ Նահանգներն ունեյին (82 միլիոն դե-  
սիատին): Մյուս յերկրներում շատ քիչ եր.  
Հնդկաստանում՝ 16 միլիոն դեսիատին եր, Ար-  
գենտինայում՝ 10, Գերմանիայում՝ 13, Ֆրան-  
սիայում՝ 12, Իտալիայում՝ 6, Անգլիայում՝  
3 միլիոն դեսիատին։

Թե ցանքսի նախապատերազմյան տարածու-  
թյունն ամենազլխավոր հացաբույսերի մեջ ինչ-  
պես եր բաշխվում, այդ ցույց ե տալիս ստորև  
բերվող № 1 դիագրամման։

Նախապատերազմյան Ռուսաստանը ցանք-  
սերի ամբողջ տարածությունից մոտ 5 միլիարդ  
փութ հաց եր հավաքում (չհաշված կարտոֆիլլ)։

առաջնությունը զիջելով միայն Հյուսիսային  
Ամերիկայի Միացյալ Նահանգներին, ու մինչև  
8 միլիարդ ֆութ հաց եր հավաքվում: Մեր հողա-  
գործության տեխնիկական հետամնացությունն

Ռուսաստանի ցանքսերի տարածության չափը —  
(մինչեւ 1914 թվի պատերազմը).

Հաճար	Հաճար	29
Ցորեն	Ցորեն	30
Գորի	Գորի	18
Կորեկ	Կորեկ	12
	Հաճար	35
Հնդկացորեն	Հնդկացորեն	2.3
Հեղիպտացորեն	Հեղիպտացորեն	2
Սիսեռ	Սիսեռ	1

№ 1. (տ. եջ. 6).

Եր միայն, վոր մեզ թույլ չեր տալիս հաց ստա-  
նալու մեջ ել առաջին տեղը բռնել, վորովհետեւ,  
շնորհիվ մատնանշած հետամնացության, մեր հա-  
ցարույսերի բերքատվությունը կրկնակի ցած եր  
ամերիկականից և յեռակի ցած՝ Անգլիայի, Բել-  
գիայի, Հոլլանդիայի և Գերմանիայի բեր-  
քատվությունից:

Սակայն, յեթե մեր հացաբույսերի ընդհանուր բերքն առանձին հացերի վրա բաժանենք ու թե մեզնում և թե հաց արտադրող ամենագլխավոր յերկրներում այդ մշակությունից ստացվածները, թեկուղ հենց նախապատերազմյան յերեք

Գլխավոր յերկրների հացի ամբողջ բերքը

1913 թ. (միլիարդ փրեռով).



№ 2 (տ. եջ. 8 – 9).

տարիներինը, համեմատենք, ապա մենք կտեսնենք, վոր նախ՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն առաջնություն են ունեցել միայն շնորհիվ իրենց յեղիպտացորենի ահագին արտադրողականության և, յերկրորդ՝ ինչպես

վերև բերած № 2 դիագրամմայից ե յերևում, մենք, մեր չորս տեսակի հացի՝ հաճարի, ցորենի, գարու և վարսակի արտադրությամբ և այս վերջինի քանակով, համաշխարհային պատերազմի նախորյակին Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից նույնիսկ առաջ ելինք անցել համաշխարհային տնտեսության մեջ առաջին տեղը գրավելով։

Բայց Ռուսաստանն իր հիմնական չորս տեսակի հացի հունձքով համաշխարհային տնտեսության մեջ վոչ միայն աչքի ընկնող տեղ եր բըռնում, այլև, Արևմտյան Յեվրոպա արտահանած հացի քանակով, առաջնակարգ յերկիր եր։

Ռուսաստանն իրավամբ կարող ե Արևմտյան Յեվրոպայի շտեմարան անվանվել, վորովհետեւ, ինչպես ստորև բերած աղյուսակից ենք տեսնում, արտահանած հացի գումարով գերազանցեց նույնիսկ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին ու Կանադային միասին վերցրած։

1913 թ. հացերի արտահանությունն

Արեվմտյան Յեվրոպա

(միլիոն փթերով)։

Ռուսաստանից . . . . .	554
Միացյալ Նահանգներից ու Կանադայից	507
Արգենտինայից և Ուրուգվայից . . .	494
Բալկանյան պետություններից . . .	144
Մյուս պետություններից . . . . .	225

1914թ. պատերազմի ըրից, ապաև միջազգային համապաշտաման հետևանքով, Ռուսաստանն իր հացն արտահանելու հնարավորությունից զբակվել եր: Ռուսաստանի տեղն աշխատում ելին բռնել հաց արտադրող ուրիշ յերկրներ, առանձնապես անդրովկիանյան յերկրները՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, Կանադան ու Արգենտինան: Սակայն, միջազգային շուկա հաց մատակարարողների թվից Ռուսաստանի դուրս գալը նրա համար խիստ զգալի յեղավ, մանավանդ վոր անդրովկիանյան մատակարարողները, վորոնց գյուղատնտեսությունը համաշխարհային պատերազմը վերջանալուց հետո յել սկսեց ճգնաժամային դրություն ապրել\*, դուրս յեկած Ռուսաստանին փոխ սրինել չկարողացան: Զնայած վոր հացի արտահանությունն անդրովկիանյան յերկրներից դեպի Արևմտյան Յեվրոպա ուժեղացած ե, այնուամենայնիվ, մասնագետների հաշվով, վերջինի հացը մոտ 200 միլիոն փութ պակասել ե, և այդ պակասն այժմ միայն Խ. Ս. Հ. Լարող ե լրացնել: Ահա մեկն այն պատճառներից, թե ինչու յեն Արևմտյան Յեվրոպայի պետություն-

\* Հայի ճգնաժամի (և ընդհանուրապես համաշխարհային տնտեսության ճգնաժամի) գեղեցիկ տեսությունը կարելի յե գտնել Ն. Ասինսկու «Գյուղատնտեսության համաշխարհային ճյնաժամը» գրքում: Հրատարակչություն «Новая деревня», 1924թ.,

Ները Խ. Ս.-ի հետ նախկին տնտեսական կապը վերականգնելու հարցով այնքան շահազըռդը ուժաված:

Կարելի յե ասել, վոր 1923 թվականից, բազմամյա ընդմիջումից հետո, առաջին անգամ Խ. Ս. Ա. Ս.-ն սկսեց իր հացն արտահանել: Այդ արտահանությունը, ճիշտ ե, դեռ փոքր ե (1923 թ. նա մոտ 107 միլիոն փութ եր), սակայն կասկած չկա, վոր այն մեծանալու յե: Բացի սրանից, մենք չենք կարող չնկատել մի ուրախալի հանգամանք: արտասահմանյան շուկայում մեր հացահատիկն իր վորակով սկսեց աչքի ընկնել, դարձավ ավելի սաքուր, միատեսակ, վորը պետք ե վերադրել արտաքին առևտրի պետականացման դրական կողմերին (պետության գործակալների կողմից արտահանվող մթերքների վորակի վրա հատուկ հսկողությանը): Այս բանում մենք նախապատերազմյան Ռուսաստանի առջեից ենք-ընթանում, յերբ բնական հատկություններով (մեծ քանակությամբ սննդանյութի—սոսնձանյութի պարունակությամբ) գերազանցող մեր ցորենն աղբության ու վատ ընտրության հետևանքով և այլն, շատ բան եր կորցնում ու միջազգային շուկայում արգենտինյան ցորենից համարյա յերկու անգամ պակաս եր գնահատվում:

Ստորև բերում ենք 1914 թ. պատերազմից

առաջ վերջին 3 տարում ռուսական հացի ար-  
տահանության թվերը:

Ամենազլիսավոր հացերի արտահանությունը  
Ռուսաստանից.  
(միլիոն փթերով).

S U R E N B R.	Ց Ա Ր Ե Ւ Թ Յ Ա Ն	Ց Ա Ր Ե Վ Ո Ր	Գ Ա Ր Ի	Վ Ա Ր Մ Ա Կ	Ց Ե Ր Ա Կ Մ Ա Կ Տ Ա Ր Ե Վ Ո Ր
1911 . . . .	240	54	262	85	82
1912 . . . .	161	31	168	52	47
1913 . . . .	203	39	239	36	35

Ինչպես այս թվանշաններից ե յերկում,  
մենք ամենից շատ, ըստ քանակի, գարի յենք  
արտահանել, ապա ցորենն ե գալիս: Հաճար,  
վարսակ և յեղիպտացորեն մենք համեմատաբար  
շատ չենք արտահանել:

Այս աղյուսակում ուշագրավը հաճարի ար-  
տահանության անսովոր փոքր չափերն են. հա-  
ճարը մեզնում նույնքան ե ցանվում, վորքան և  
ցորենը: Այս հանգամանքը բացատրվում ե նրա-  
նով, վոր մեզնում ժողովրդի գլխավոր հացը հա-  
ճարն ե, վորը վաղուց իւրեք ցանվում եր հին  
Ռուսիայում, ուր ցորեն զրեթե չեր մշակվում  
(հին ժամանակները ցորենը մենք կամայի բոլ-

գարներից եյինք ստանում) և փոքրիշատե աչքի ընկնող չափով Յեկատերինա Արքամանակից սկսած միայն յերևաց (Նովորասսիան Ռուսաստանի հետ միացնելիս): Ահա թե ինչու մինչև որս հաճարը ժողովրդի հիմնական բույսն ե հանդիսանում ու գրեթե ամբողջովին գնում ներքին շուկայի կարիքները բավարարելու: Զնայած վոր Գերմանիան Ռուսաստանից կրկնակի չափով պակաս եր հաճար արտադրել, սակայն միջազգային շուկա ամենից շատ եր արտահանել\*:

Յեվ այսպես, յերկրագործական ամենապրիմիտիվ միջոցներով ու ցածր աստիճանի բերքատվությամբ (Արևմտյան Յեվրոպայի առաջավոր յերկրներից 3–4 անգամ պակաս) Ռուսաստանը 5 միլիարդ ֆթից ավելի հաց եր հավաքել ու  $\frac{1}{2}$  միլիարդ ֆթից ավելի արտահանել: Մինչդեռ մեր յերկիրը հացերի ավելուրդի ինչպիսի ուժեղ աղբյուր կլիներ, յեթե մեր հողագործության տեխնիկան միքիչ մոտենար Արևմտյան Յեվրոպայի տեխնիկայի մակարդակին\*\*:

\* Այսպես, 1913 թ. Ռուսաստանի արտահանած 39,5 միլիոն փութ հաճարի դիմաց Գերմանիան 57 միլիոն փութ ե արտահանել:

\*\* Գիտության նվաճումների (հողագործական քիմիա) հետեանքով հողագործության պրոցեսսի զեղեցիկ շարադրությունը կարելի յե գտնել պրոֆեսոր Զուպրովի «Մանր հողագործությունն ու նրա կարիքները» գրքում:

Բայց, դրանից զատ, ցանքսի տարածությունը  
 մեծացնելու տեսակետից Խ. Ա. Հ. Մ.-ն իր մեջ  
 դեռ լայն հնարավորություններ ունի թաղցրած:  
 Այս ուղղությամբ հեռանկարները շատ են մեծ:  
 Ամենից առաջ հենց միմիայն Գերմանիայի, Դա-  
 նիայի, Հոլլանդիայի և այլ կանոնավոր տնտե-  
 սությունների ձեռվ բազմադաշտային ցանքսա-  
 փոխության անցնելուց, ցանքսի տարածության  
 ահազին ավելացում կստացվեր: Այսը մեզնում  
 յեռադաշտային ու խամացնելու սիստեմները  
 Խ. Ա. Հ. Մ.-ի ցանքսի տարածության մինչև  
 $40^{\circ}$  ցել ու խամ են թողնում, մինչդեռ Արև-  
 մըտյան Յեվրոպայում նման «հանգստացող» հո-  
 ղեր գրեթե արդեն գոյություն չունեն. ապա  
 ճանիձները չորացնելու միջոցով և այլն, մենք  
 կկարողանայինք, ըստ տնտեսագետների հաշվի,  
 Խ. Ա. Մ.-ի միմիայն յեվրոպական մասում  
 ցանքսի տարածությունը, համենայն դեպս,  
 $30^{\circ}$ -ով ավելացնել: Բայց Խ. Ա. Հ. Մ.-ի ասիական  
 մասում մենք մի յերկրամաս ել ունենք, վորը  
 գրեթե անարատ ե ու յերեք անգամ գերազան-  
 ցում ե յեվրոպականին: Այսպես, Ասիական Ռուսա-  
 տանի միմիայն արևմտյան մասում կարող ենք  
 նշել 150 սիլիոն դեսիատին ամենահարուստ սեա-  
 հող ( $\text{վորի } \frac{1}{30}$  մասն ե այժմ վարած)\*, Այսպի-

\* Ռուսաստանն ելեկտրիֆիկացիայի յենթարկող  
 հանձնաժողովի աշխատանքերը: «Ներածություն Խոր-

սով Խ. Ա. Հ. Մ..ն ապագայում հացի արտադրության բացառիկ հնարավորություններ են ներկայացնում:

Իմպերիալիստական պատերազմն ու քաղաքացիական կոփմսերը մեր հողագործության վրա կործանիչ կերպով անդրադարձան։ Ցանքսի տարածությունն 86 միլիոն դեսիատինից (Խ. Ա. Հ. Մ..ի սահմաններում) մինչև 58,6 միլիոն դեսիատինի իջավ (1922 թվականին)։ Ամենից շատ պահվել են այն հացերի ցանքսերը, վորոնք մեր արտահանության գլխավոր առարկան եյին, հատկապես ցորենի և գարու։ Մյուս հացերի ցանքսերը քիչ են տուժել։ Դրա հետ սկսեց ընկնել հացերի ամբողջ բերքը, վորը 1922 թվականին 3 միլիարդ փթից ավելի չեր<sup>\*</sup>. Ընդումին պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, վոր արտահանվող մեր հացի հաշվեկշռը (բալանսն<sup>\*\*</sup>) ել ավելի ակտիվ կլիներ, յեթե մեր հացն իբրև հացահատիկ չարտահանվեր, այլ,

---

հուրդների Համառուսական VIII Համագումարին արած գեկուցման», եջ 87.

\* Հենց 1921 թվականին, ահռելի անբերրիության հետեանքով, Վոլգայի շրջակայքում ու Հյուսիսային կովկասում հացերի ամբողջ բերքը նույնիսկ 2 միլիարդ փթի չհասավ։

\*\* Հաշվեկշռ անվանվում ե տարբերությունը մուտքի և յելքի միջև, իսկ միջազգային առեալի մեջ՝ տարբերություն արտահանության և ներմուծման միջև։ Յեթե արտահանությունը գերազանցում ե ներ-

ըստ հնարավորության, ավելի շուտ իբրև ալյուր  
արտահանվեր: Արտահանվող ալյուրի քանակը  
մեզնում հացի ամբողջ արտահանության միայն  
 $20\%$  էր, այն ինչ Հյուսիսային Ամերիկայի  
Միացյալ Նահանգներում՝  $76\%$ , Կերմանիայում՝  
 $58\%$ , Ավստրալիայում՝  $18\%$ , Կանադայում՝  
 $15\%$  և այլն: Մինչդեռ հացը միայն իբրև հա-  
ցահատիկ արտահանելիս մենք միանգամից յե-  
րեք ուղղությամբ ենք կորցնում. առաջինը՝ յե-  
կամտի վորոշ քանակը (աղալու շահադը) մեր  
ձեռքից դուրս ե գալիս ու անցնում արտասահ-  
մանցիներին. յերկրորդը՝ հացահատիկի փոխա-  
դրությունը, իբրև ավելի մեծածավալ մթերքի,  
քան ալյուրն ե, փոխադրվող նյութի ինքնար-  
ժեքի վրա ավելի յե մեծ ըեռ դառնում, քան  
ալյուրի փոխադրությունը. հացահատիկով ար-  
տահանելիս մենք արտահանում ենք նաև անա-  
սունների համար շատ կարևոր կերը՝ թեփը, վոր  
այլապես մեր տրամադրության տակ կմնա (ա-  
ղալուց):

Յեվ այսպես, չի կարելի չտեսնել, վոր մեր  
դանքսերի տարածությունը մեծացնելուց (վորը,  
ինչպես մենք տեսանք, լայն մասշտաբով ե հնա-  
մուծման, ապա հաշվեկշիռն ակտիվ ե կոչվում և հա-  
մարվում ե նպաստավոր: Իսկ յեթե ներմուծումն ե  
ցերազանցում արտահանության, ապա հաշվեկշիռը  
պաստիվ ու աննպաստ ե:

բավոր), հողագործության ավելի կատարելագործված ձևերի և սիստեմների անցնելուց, ու մեր բերքատվությունն Արևմտյան Յեվրովայի մակարդակին մոտեցնելուց և հացի հացահատիկային արտահանությունից զլիսավորապես ալյուրի արտահանության անցնելուց՝ մեր հաշվեկշռի ակտիվուաչքի ընկնող թվերի կարող են հասնել։ Սակայն պետք է յենթադրել, վոր Խ. Ս. Հ. Մ.-ի ժողովրդական տնտեսության վերականգնելու ու մեր հացի արտահանության հետևանքով, վերջինի արտադրությունն արագ բայլերով կընթանա։ 1923 թվականին Խ. Ս. Հ. Մ.-ի ցանքսի տարածությունը մինչև 70,5 միլիոն դեսիատինի բարձրացավ, թեև հացի ամբողջ բերքը (2,9 միլիարդ փութ) վառ բերքատվության հետևանքով մնաց զրեթե այսպես, ինչպես 1922 թվականին եր։ Իսկ 1924 թվականին ցանքսի տարածությունը 75,5 միլիոն դեսիատինի հասավ, սակայն նոր անբերը իության հետևանքով։ Միության յեվրոպական մասի հարավ-արևելքում հացերի ամբողջ բերքն ընդամենը 2,6 միլիարդ փութ յեղավ (բայց կարտոֆիլի բերքը հացահատիկի վերածելով\* — 3,1 միլիարդ փութ)։

Վերջացնելով Խ. Ս. Հ. Մ.-ի հացահատիկ-

\* Հաշիվը արված ե 4:1 հարաբերությամբ, աւ կերպ ասած՝ 4 փութ կարտոֆիլը, ըստ սննդարարության, հավասար ե 1 փութ ցարենի։

Ների ուրվագիծը, չի կարելի չնշել մի նշանագոր  
յերևույթ՝ վերջին ժամանակ մեզնում կորեկի  
յեւլ յեղիպտացորենի ցանքսերի արտասովոր աճե-  
լը։ Այս բույսերի ցանքսերի տարածությունները  
նախապատերազմյանից ել անցան. 1923 թվա-  
կանին կորեկատեղի տարածությունը 5 միլիոն  
դեսիատինից անցավ, իսկ յեղիպտացորենինը 1,6  
միլ. դեսիատինի հասավ։ Այս բույսերի այսպիսի  
աճեցողությունը բացատրվում ենքանց յերաշտա-  
տոկունությամբ (չորայնությանը դիմանալով),  
կերի խոշոր նշանակությամբ (յեղիպտացորենի) և  
ցանելու ձեռնտվությամբ (կորեկի համար մի դե-  
սիատինին ընդամենը 35 փութ բավական ե<sup>\*</sup>) և  
այս հացերի այսպիսի առավելությունը Ռուսաս-  
տանի ժողովուրդն առանձնապես գնահատում եր  
սովի տարիներում։

## ՊՏՂԱՐՄԱՏՆԵՐԸ.

### Կարտոֆիլի ցանքսերով ունրաբերքով համաշ- խարհային տնտեսության մեջ յերկու պետություն- եյին աչքի ընկնում։ Գերմանիան և Ռուսաստանը։ Գերմանիայում տարեկան մոտ 3 միլիարդ փութ կարտոֆիլ եր հավաքվում, իսկ Ռուսաստանում մոտ 2 միլիարդ։

---

\* Հայաստանում 1 դեսիատինին 1—1<sup>1</sup>/<sub>2</sub> փութ  
կորեկը բավական եւ.

Այսպիսով՝ նախապատերազմյան Ռուսաստանը, հայթայթվող կարտոֆիլի քանակով յերկրագընդի վրա յերկրորդ տեղն եր բռնում։ Սակայն վորովհետեւ 1924 թվականին Խ. Ա. Հ. Մ.-ում կարտոֆիլի ցանքսի տարածությունն արդեն նախապատերազմյանի  $\frac{4}{5}$ -ի չափ յեղավ (մոտավորապես նույն ել Գերմանիայում), և վորովհետեւ, կարտոֆիլի ցանքսի տարածության քանակով, մյուս պետությունները Գերմանիայից ու Խ. Ա. Հ. Մ.-ից շատ են յետ մնում, ապա այս յերկու պետության նախապատերազմյան դրությունն այժմ ել ե պահպում։

Սակայն յեթե հողագործությունն ինտենսիվ կերպով տարվեր, կարտոֆիլի մեր հարստությունը շատ աչքի կընկներ. մինչդեռ Բելգիայում մեկ դեսիատինի բերքատվությունն անցնում է 1300 փթից, Գերմանիայում՝ 1000 փթից, Խ. Ա. Հ. Մ.-ում միջակն ե միայն 400–500 փութ լինում։

Բացի այն, վոր Խ. Ա. Հ. Մ.-ում կարտոֆիլն անմիջականորեն բանացնում են իրեն արմբատիք, խոշոր նշանակություն ունի այն նաև վորպես տեխնիկապես վերամշակելու նյութ՝ սպիրտի, կրախմալի և մաթի (շիրի) համար։

1924 թվականին Խ. Ա. Հ. Մ.-ում կարտոֆիլի բերքը 1,9 միլիարդ փթի հասավ, վորը, ինչպես տեսնում եք, արդեն բոլորովին մոտենում է նախապատերազմյան մակարդակին։

## Ճակնդեղ (շաբարի).

Ճակնդեղի ցանքսի տարածության քանակով  
Ռուսաստանը մինչև 1914 թվականի համաշխար-  
հային պատերազմն աշխարհում առաջին տեղն  
եր ըռնում (700 հազար դեսիատինից ավելի),  
բայց նրա բերքով (մոտ 800 միլիոն փութ), տըն-  
տեսության նվազելու հետևանքով, իսկ մասամբ  
ել կլիմայական պատճառներով, Գերմանիայից  
յետ եր մնում։ Խ. Ս. Հ. Մ. ում ճակնդեղի  
մշակությամբ միայն Ուկրանայում են պարա-  
պում։ Մյուս պետություններից շաքարի ճակն-  
դեղի մշակությամբ փոքրիշատե պարապում  
են Ֆրանսիայում և Չեխո-Ալպակիայում, իսկ  
անդրովկիանյան յերկրներից՝ Հյուսիսային Ամե-  
րիկայի Միացյալ Նահանգներում։

Զանազան պետությունների շաբարանակնեղի  
միջին բերքը մեկ դեսիատինից (հազար փթերով)։



Դանիա Շելդիա Գերմանիա Հոլլանդիա Ֆրանսիա Ռուսաստան  
№ 3. (ա. եջ. 20).

Ինչպես տեսնում ենք վերև բերած  
դիագրամմայից, մեզնում, ճակնդեղի նվազ բեր-  
քատվության հետևանքով, արևմտա-յեվրոպա-

կան պետությունների հետ համեմատած, մենք  
շատ բան ենք կորցնում:

Ճակնդեղն այնպիսի բույսերի կարգին ե  
պատկանում, վորոնց մշակությունն ամեն կերպ  
պիտի խրախուսվի. վոչ մի բույս հողաշերտի այն-  
պիսի նախնական խոր վար և ապա խնամք  
(աղբով կամ հանքային նյութերով առատորեն  
պարարտացնել, քաղհան և այլն) չի պահանջում,  
ինչպես ճակնդեղը, վորն անկախ հատուկ նպա-  
տակներից (այս պտղարմատի ընտիր աճելով),  
հողը լավացնում ե հետագա բույսերի համար: Դրա  
հետ միասին ճակնդեղը տալիս ե սննդարար ըն-  
տիր թափթփուկներ (քուսպի յեվ սեվ մաթի  
պես), վորի հետևանքով, սովորաբար ճակնդեղա-  
շաքարային տնտեսությունը մեծ քանակությամբ  
անսասուններ պահելու և կերակրելու հետ ե կապ-  
վում: Ընդսմին պետք ե ինկատի ունենալ, վոր  
մեզնում շաքարն արտահանության բավակա-  
նին կարևոր աղբյուր եր: Շաքարի արտահա-  
նության չափը 32 միլիոն փթի յեր հասնում  
(նախապատերազմյան ժամանակ ամենաբարձր  
արտադրությունն եր 117 միլիոն փութ), և մենք  
մեր շաքարի համար Ֆինլանդիայի ու արևելյան  
յերկրների, մանավանդ Պարսկաստանի պես  
խիստ լայն շուկաներ ունեյինք:

Պատերազմի և հեղափոխության ընթաց-  
քում ճակնդեղա-շաքարային մշակությունը

սաստիկ տուժեց, մանավանդ քաղաքացիական  
կոփլսերի ժամանակ, վորոնց գոտում միքանի  
տարի շարունակ գտնվել ե շաքարի ճակնդեղի  
ցանքսերի գլխավոր շրջանը՝ Ռէկրայնան։ 1921  
թվականին ճակնդեղի ցանքսի տարածությունն  
իջավ մինչև 162 հազար դեսիատինի։ 1922 թվա-  
կանից դրությունն սկսեց նկատելի չափով լավա-  
նալ. ճակնդեղի ցանքսի տարածությունը հետք-  
հետեւ ավելանալով՝ առ 1924 թվականը 326  
դեսիատին դարձավ։

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՑՍԵՐԸ.

Վուշ (կտավիատ)։

Վուշը Ա. Խ. Հ. Մ.-ի կարեռագույն հա-  
րըստություններից մեկն ե։ Աշխարհում վոչ մի  
յերկիր վուշի ցանքսի այնպիսի ահագին տարա-  
ծություն չունի, ինչպիսին Խ. Ա. Հ. Մինչև  
1914 թվականի պատերազմը Ռուսաստանում  
 $1\frac{1}{2}$  միլիոն դեսիատինից անցնող վշատեղի մի  
տարածություն կար, մինչդեռ արևմտայեվրո-  
պական պետություններից վոչ մեկում վշատեղի  
տարածությունը 100 հազար դեսիատինի չեղ  
հասնում\*, Մանածացուի բերքը միջին թվով

\* Հնդսմին անհրաժեշտ ե ինկատի ունենալ, վոր  
միմիայն մանածացու վշի (յերկարաթել վուշ) համար  
աշխարհում վոչ մի տեղ, ինչպես Խ. Ա. Հ. Մ. ե, այս-  
պիսի ահագին տարածություն չկա, վորովհետեւ այն-

(1905—1914թ. ընթացքում) տարեկան մոտ 40  
միլիոն փութեր լինում։ Այս քանակից մոտ 16—19  
միլիոն փութն արտահանվում էր, վորը յեվրոպա-  
կան վշագործական ֆաբրիկաներում մշակվող ամ-  
բողջ հում նյութի  $80^0/0$ -ն էր։ Ընդհանրապես մեր  
արտահանության մեջ վուշը լուրջ աղբյուր էր,  
ըստ արժեքի (կանեփի թելացուի հետ միասին),  
յերկրորդ տեղը բռնելով հացից և փայտից հետո։  
Վուշի (մանածացու) մշակությամբ պարա-  
պում են Խ. Ա. Հ. Վ. ի վոչ-սեահող գոտում։  
Յանքսի տարածության մեծամասնությամբ մա-  
նածացու վուշի գլխավոր շրջաններն են՝ Սմա-  
լենսկի, Պոկովի, Տվերի և Վյատկայի նահանգները։  
Իսկ Ռուսաստանի սեահող գոտում պարապում  
են կոխնջ վուշի մշակությամբ, վորը հատիկի  
համար եւ Վուշի (յերկարաթել) բերքատվու-  
թյունը մեկ դեսիատինից միջին թվով 30 փութ  
եր լինում է, մեր հետամնաց անտեսության ընդ-  
հանուր պատճառներով։ Չատ ցած եր (գրեթե  
կը կնակի), քան Հոլլանդիայում, Բելգիայում,

---

պիսի յերկրներում, ինչպիսին Անգլիան, Հնդկաստանն  
ու Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն  
են, վուշի (կոխնջ, բացառապես իրրենատիկ զործածվող)  
յանքսի տարածությունները մեկ միլիոն դեսիստինից  
ելին անցնում։ Իսկ արդյունահանած հատիկների չա-  
փով (մինչև 1914 թ. պատերազմը մոտ 35 միլիոն  
փութ), Ռուսաստանը վերոհիշյալ պետություններից  
յետ եր մնում։

ֆրանսիայում և արևմտյան մյուս պետություններում։ Պատերազմն ու նրան հաջորդող բռլոր անցքերը վուշի մշակույթի վրա կործանիչ կերպով անդրադարձան, նրա ցանքսերն առանձնապես ուժեղ կրծատվեցին (առ 1921 թվականը  $\frac{2}{2}$  անգամ հանդեպ նախապատերազմյան տարածության), վորը բացատրվում է մի կողմից նրա արտահանության ընդհատումով, իսկ մյուս կողմից՝ վուշ-մանող և վուշ-գործող մեր Փաբրիկաների արտադրության նվազելով։

1923 թվականից դրությունն սկսեց լավանալ. ցանքսերի տարածությունն սկսեց աճել, 1924 թվականին հասնելով 100 հազար դեսիատինի (իսկ ընդամենը յերկարաթել վուշի և կոինջ վուշի ցանքսերի տարածությունը 1 միլիոն դեսիատինից անցավ), իսկ մանածացուինը 12,2 միլիոն փթի հասավ\*։

Սակայն մեր արտահանությունն առայժմ մեծ չի. 1923 թվականին այն յերեք միլիոն փութ եր (2,2 միլիոն փութ վուշ և 0,7 միլիոն փութ թելացու և քոլք), իսկ 1923 թվականին՝ մոտ 2 միլիոն փութ։

### Կանեփի.

Կանեփի ցանքսերով ու նրա բերքով Ռուսաստանն աշխարհում առաջին տեղն եր բռնում

\* Խ. Ս. Հ. Մ.-ի վուշ մշակող 23 նահանգում և առանց Սիրիոի։

(այժմ ել ե բռնում): Ռուսաստանում կանեփի ցանքսերի տարածությունն ընդամենը 700 հազար դեսիատին ե յեղել, վորոնք մոտ 20 միլիոն փութ մանածացու եյին տալիս (և մոտ 25 միլիոն փութ ել հատիկ): Ժողովրդական տնտեսության այս ճյուղում, ինչպես և յերկարաթել վուշի մշակույթի մեջ, Խ. Ա. Հ. Մ.-ն մըցակից չունի: Կանեփը միայն նախկին Ավստրո-Հունգարիայում և Իտալիայում եր քիչ աչքի ընկնող շափերով ցանվում, բայց այնտեղ ել ցանքսի տարածությունը 100 հազար դեսիատինի չեր հասնում:

Կանեփի մանածացուն (ծերքը—թելացու ընտիր մասը) կոպիտ, բայց դիմացկուն առարկաներ, որինակ՝ առագաստ, հաստ պարան (ճոպան), քաթան, խցանյութ պատրաստելու համար ե գործադրվում և այլն: 1914 թ. պատերազմից առաջ վերջին տարիներում մոտ 4 միլ. ֆ. ծերք (բուքով) և մոտ 1 միլ. ֆ. ել հատիկ ենք արտահանել:

Պետք ե նկատել, վոր դեռ մինչև 1914 թ. պատերազմը Ռուսաստանում կանեփի մշակությունն զգալի չափով կրճատվել սկսեց, վորի պատճառներն են՝ 1) ջութի, 2) յերկաթալար ճոպանների և 3) հանքային յուղերի մըցումը, վորոնք տեխնիկական պրոցեսսներում բուսական յուղերի գործածությունը հետզհետե դուրս են

վանդում։ Սակայն շարունակ զարգացող առեստուրն ու նրա պահանջը խցանյութերի նկատմամբ, կանեփի արտադրության մատնանշած նվազումը ներկայումս դանդաղացնում է։

Պատերազմն ու վերջին անցքերը խիստ կերպով անդրադան նաև կանեփի մշակույթի վրա, վորի ցանքսի տարածությունն առ 1921 թվականն ընկավ մինչև 200 դեսիատինի, այսինքն՝ ավելի քան յեռակի նվազեց։ Բայց հետո մենք արդեն այդ մշակույթի զարգացումն ենք նկատում։ 1923 թվականին կանեփի ցանքսի տարածությունն արդեն նախապատերազմյանի տարածության  $\frac{2}{3}$ -ին հասավ, իսկ 1924 թվականին 525 հազար դեսիատին դարձավ։ Առաջ հետ միասին սկսեց կարգավորվել նաև կանեփի արտահանությունը։ 1922 թվականին այդ արտահանությունը 668 հազար ֆթի հասավ (սակայն 1923 թվականին մինչև 268 հազարի իջավ)։


### Բամբակ.

Ինչպես յերևում ե ստորև բերած դիագրամմայից, բամբակի արտադրությամբ Ռուսաստանն աշխարհում յերրորդ տեղն եր բռնում։

Խ. Ա. Հ. Մ. ռում, կլիմայական պատճառերով, բամբակի մշակությունը հնարավոր ե միայն Թուրքեստանում և Անդրկովկասում։ Նշած 28 միլիոն փութ բամբակի բերքից 24 միլիոն

փութը թուրքեստանին եր ընկնում։ Թուրքեստանում բամբակի մշակույթն անհիշելի ժամանակներից ե տարվել, բայց հատուկ զարգացումն


Բամբակի համաօխ սրհային արտադրությունը  
(մինչեւ 1914 թ. պատերազմը),



208.


(ՄիԱՌՆ ԿՐԵՐԴՎ)

6



46

28.



21.



16.



Միաց.  
նան,

Բրիտ.  
Հնդկաստ.

Օռասատան

Յեզիրանո

Զինաստան

№ 4. (ա. եջ. 26).

ստացել ե այդ յերկրում ոռւսներ բնակեցնելուց  
հետո (անցյալ դարու 60-ական թվականներից),  
վորոնք ամերիկական բամբակի սերմ տարան

\* Դիագրամմայի թվանշանները ցույց են տալիս  
հում բամբակի բերքը (հնդավորը)։ Իսկ մաքուր մա-  
նածացուն իր քաշով հնդավորի մոտ  $\frac{1}{3}$ -ն է։

այնտեղ, Վերջինը տեղական պայմաններին միանգամայն պիտանի գտնվեց և ընտիր բերք ու զերազանց վորակի մանածացու տալով, սկըսեց տեղական ցածր վորակի բամբակի կամաց կամաց դուրս վռնդել։ Ամերիկական բամբակի մշակության շահավետության մեջ ժողովուրդը շատ շուտ համոզվեց, և 1914 թվականի պատերազմից առաջ բամբակացանության մեծ մասն ամերիկական բամբակի սերմով եր կատարվում։

Տեղական բամբակի գերակշռող նշանակությունը պահպանվել ե միայն Խիվայում և Բուխարայում։

Ամերիկական բամբակի բարձր առավելությունները հանդեպ տեղականի և ընդհանրապես բամբակաբուծությամբ պարագելու շահավետությունը, վոր տարածության միավորից յեռակապելի յեկամուտ եր տալիս, քան հացի մշակույթները, բամբակը Ռուսաստանի խորքն արտահանելու (յերկաթուղիների անցկացումով) հնարավորություն ստեղծվելու հետ միասին, — պատճառ յեղան այդ յերկրի բամբակաբուծության արտասովոր աճման։ Այսպես, տաս տարում (1906-ից մինչև 1916 թվականը) բամբակի ցանքսի տարածությունը գրեթե 7 անգամ ավելացավ (107 հազար դեսիարինից մինչև 714 հազար), և միայն քաղաքացիական կոխմբերն եյին, վոր

այդ աճելը կանգնեցրին ու, կարելի յե ասել, ժամակակավորապես այս մշակույթը կործանեցին:

Սկսած 1917 թվականից, բամբակատեղի տարածությունը խիստ կրճատման յենթարկվեց. 714 հազար դեսիատինից միանգամից իջավ 425 — հազար դեսիատինի, 1918 թվականին՝ մինչև 80 հազար և 1922 թվականին՝ մինչև 51 հազար դեսիատինի։ Բամբակի մշակության այսպիսի անկումը, քաղաքացիական կոփվերից ու Խ.Ա. Հ.Մ.-ի յեվրոպական մասը բամբակ արտահանելու ընդհատումից զատ, բացատրվում է նաև մի շարք հետեւյալ պատճառներով. — սովոր, անասունների պակասելով, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների մաշվածությունով, սերմացուների անբավարար լավորակությունով (վորոնք արտասահմանից առաջուց ելին բերած յեղել) և այլն։

Բայց 1923 թվականից մենք բամբակի մշակության վերածնունդն ու ցանքսերի տարածության ավելացումն ենք նկատում (մինչև 202 հազար դեսիատին)։ Իսկ առ 1925 թվականի սկիզբը բամբակի ցանքսերի տարածությունը մինչև 442 հազար դեսիատինի հասավ, ու հռոմ բամբակը — հնդավորը մոտ 22 միլիոն փ. յեղավ։

Նախապատերազմյան Ռուսաստանում ստացվող բամբակով մենք, սակայն, բամբակի մեր

պահանջի կեսն եյինք բավարարում, իսկ մյուս  
կեսը՝ արտասահմանի (գլխավորապես ամերիկա-  
կան և միայն մասամբ յեզիպտական, պարսկա-  
կան ու Արևմտյան-Հնդկաստանի—Վեստ-Ինդիայի)  
բամբակով եյինք բավարարում։

Սակայն անհրաժեշտ ե ինկատի ունենալ,  
վոր մեզնում, Խ.Ս.Հ.Մ.-ում իսկ, կարելի յե-  
ասել, մինչև անսովոր չափերի, բամբակի մշա-  
կության լայն հնարավորություններ կան։ Բանն  
այն ե, վոր բամբակի մշակությունը սերտ կեր-  
պով կապված ե վոռոգման հետ։ Թուրքեստանի  
(այսպես կոչված «հարմար հողերի») գրեթե ա-  
մեն մի տարածություն արհեստական վոռոգման  
միջոցով կարող ե բամբակի ցանքսերի վերած-  
վել։ Իսկ նորանոր հետազոտությունների համա-  
ձայն, թուրքեստանում նման չվոռոգված, բայց  
բամբակի մշակույթի համար սկիտանի տարա-  
ծությունները 5 միլիոն դեսիմատինից պակաս չեն  
հաշվում։ Դժվար չի տեսնել, վոր յեթե այդ  
տարածության միայն մի մասը վոռոգենք, ապա  
բամբակի արտադրությունը մենք այնքան կա-  
վելացնենք, վոր Խ.Ս.Հ.Մ.-ն միջազգային շու-  
կա բամբակ արտահանող մի յերկիր կդառնա։

## ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԻՆԵ- ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Թեև այդեգործության քանակով ու նրա  
հետ կապված գինեգործությամբ մուսաստանը

ամաշխարհային տնտեսության մեջ աչքի ընկնող տեղ չեր բռնում, բայց տնտեսության այս ճյուղի զարգացման համար յեղած հեռանկարները ինկատի ունենալով՝ հարկավոր ե վերջնի մասին միքանի խոսք ասել։ Խաղողի այգիների նախապատերազմյան աարածության քանակով այգեգործության համար կարևոր յերկրները հետեւյալ կերպ են դասավորվում՝

Իտալիա	.	.	4	միլիոն դեսիատին.
Ֆրանսիա	.	.	$1\frac{1}{2}$	»
Սպանիա	.	.	1	»
Հունգարիա	.	.	300 հազար	»
Ռուսաստան	.	.	250	»

Սակայն այգեգործության ու նրա հետ կապված գինեգործության քանակով Ռուսաստանը դեռ յետ ե մնում մի շարք յերկրներից (Ալժիրից, Պորտուգալիայից, Գերմանիայից, Հունաստանից, Արգենտինայից ու Չիլիից), վորոնք խաղողի այգիներ ավելի քիչ ունեն, բայց խաղողի մեծ բերքեր են ստանում նրանցից։

Խ. Ա. Հ. Մ. ում խաղողի կարևոր շրջաններն են՝ կովկասը (նախապատերազմյան շրջանում մոտ 106 հազար դեսիատինով), Բեսսարաբիան\* (մոտ 94 հազար դես.), Թուրքեստանը (30 հազար

\* Պադուկի և Աղեսայի նահանգներով

դես.), Դրիմը (9 հազար դես.), Դոնի շրջանը (10 հազար դես.) և Աստրախանը (500 դես.):

Այս շրջաններից քսնակով ամենից աչքի ընկնողը Կովկասն է, Բայց այստեղ, ինչպես և Խ. Ս. Հ. Մ.-ի մյուս վայրերում, խաղողի այգիները, ընդհանուր առմամբ, իրենց պտուղների առավելություններով չեն կարող պարծենալ. մեզնում մեծ մասամբ մշակվում են խաղողի ցածր տեսակները, վորոնք բարձր վորակի խաղող չեն տալիս ու թթու յեն, վորը, հմուտ զինեգործների մեզնում բացակայելու հետեանքով, մեր զինիների վոչ ձեռնտու կողմի ու վորակի վրա յեանդրադառնում:

Գինեգործության վիճակի (постановка) նկատմամբ նշանավոր դեր ե խաղում նոև այն հանգամանքը, վոր մեզնում խաղողը մշակվում ե գլխավորապես այն յերկրներում, ուր բնակչությունը մուսուլմաններ են, վորոնք կրոնական դրդապատճառներով զինի չեն գործածում: Սակայն միքանի շրջաններ իրենց զինիների վորակով աչքի յեն ընկնում: Այսպես, Կովկասում մեծ հոչակ ե վայելում կախեթիան, ուր պատրաստվում ե «կախեթի» հոչակավոր զինին, վոր աչքի յե ընկնում ախորժելի համով, բայց, ցավոք սրտի, փոխադրության չի դիմանում:

Հետեյալը մեծությամբ, Բեսսարաբիայի շրջանն ե (Պաղոլսկի և Ալեսսայինահանգներով): Այս

ՉՐՅԱՆԸ մեզ խիստ ցածր տեսակի գինիներ եր  
մատակարարում, բայց, ճշմարիտ ե, դրա վո-  
խարեն՝ ամենաեժանագինները, վորոնք Խ. Ս. Հ.  
Մ.-ի վողջ տերրիտորիայում մեծ չափով եյին  
տարածվում։ Ներկայումս այս ՉՐՅԱՆԸ մեզ համար  
ժամանակավորապես նշանակությունը կորցրել ե,  
վորովհետև նրա ընտիր մասը (ԲԵՍՍԱՐԱՔԻԱՆ)  
Ռումինիան ե զավթել։

Թուրքեստանի ՉՐՅԱՆԸ—մեծությամբ յեր-  
րորդը—ապագայում մեր կարևոր ՉՐՅԱՆՆ ե դառ-  
նալու, Այս ՉՐՅԱՆԸ չվոռոգված, բայց խաղողի  
մշակույթի (և նույնիսկ մերձարեադարձային  
մշակույթների՝ նարնջի, կիտրոնի, սուրճի և այլն)՝  
համար միանգամայն պետքական հողեր ունի։  
Այս դեռևս խոպան հողերի վոռոգումով այս  
յերկրում խաղողի մշակույթյունը հսկայական չա-  
փեր կարող ե ընդունել։ Այնուամենայնիվ Թուր-  
քեստանի ՉՐՅԱՆում այգեգործության ու գինե-  
գործության պրոգրեսը վոչ միայն քանակի,  
այլև վորակի կողմից փայլուն հեռանկարներ  
ունի։ Այս յերկրի կլիմայական, հողի և բնական  
այլ պայմանները նպաստում են խաղողի ընտիր  
վորթեր բուսցնելուն, վորոնք բավականին ար-  
ժեքավոր գինիներ կարող են տալ։ Ճիշտ ե,  
Թուրքեստանի կարմիր ու սպիտակ գինիներն այն  
քանակությունն ու համի դուրեկանությունը չու-

նեն, ինչպիսիք ֆրանսիական գինիներն ունեն, բայց, դրա վոխառեն, այսպես կոչված գեսսերտի գինիներն իրենց արժանի հոչակն են վայելում (իսկ գեսսերտի տեղական «վատագույն մուսկատ» գինին իր արոմատով աշխարհում նմանը չունի): Հաղորդակցության ճանապարհների բացակայությունը և ընդհանուրապես սպառող կենարոնների այս յերկրից հեռու լինելը յերկրի գինեգործության պատշաճ զարգացմանն ու վերջնից տեղական գինիներ արտահանելուն առաջմ դեռ լուրջ արգելք են հանդիսանում:

Հրիմի շրջանը, վորն ընդամենը 9 հազար դեսիատին խաղողի այգիներ ե ընդգրկում, շնորհիվ այգեգործության ու գինեգործության բարձր վիճակի, մեր ամենազլիսավոր գինեգործական շրջանն ե հանդիսանում:

Այստեղ գինեգործական տնտեսության հաջող զարգացմանը նպաստում եյին կայսերական տան անձանց ու միքանի ոռուս կապիտալիստների նախկին արքունապատկան (удельный) գերատեսչության որինակելի կերպով ղրված տնկարանները (плантации), Շնորհիվ որինակելի տընտեսության, Հրիմի գինիները Ռուսաստանի մյուս գինիների մեջ ընտիր արժանիքներով եյին աչքի ընկնում: Իսկ սուանձնապես իրենց արժանի հոչակն եյին վայելում գեսսերտի գինիները՝

պորտվեյնը, իսերեսը, մաղերը, մարսալան,  
մուսկատ-լյունելը, լյա-քրիմա-քրիստին և այլն,  
վորոնք իրենց արժանիքներով նույնիսկ արտա-  
սահմանյան գինիների հետ ելին մըցում:

### ԾԽԱԽՈՏ.

Ծխախոտի արտադրությամբ Խ. Ս. Հ Մ. Ն  
համաշխարհային տնտեսության մեջ կարեռը  
դիրք ե գրավում արտադրվող ծխախոտի քա-  
նակով գերազանցելով Արևմտյան Յեվրոպայի  
բոլոր յերկրներին և յետ մնալով միայն Հյուսի-  
սային Ամերիկայի Միացյալ Նահանգներից ու  
Բրիտանական Հնդկաստանից: Նախապատերազ-  
մյան շրջանում Ռուսաստանում ծխախոտի ցանք-  
սի տարածությունը մոտ 70 հազար դեսիմատին  
եր, իսկ ծխախոտների բերքը մինչև 7 միլիոն  
փթի յեր հասնում: Այս քանակից մոտ  $\frac{2}{3}$ -ը հա-  
սարակ տեսակի ծխախոտին (մախորկային) եր  
ընկնում, իսկ  $\frac{1}{3}$ -ը՝ դեղին ծխախոտներին, այ-  
սինքն՝ ամերիկականին (սիդարի) և տաճկակ-  
նին (գլանակի):

Մեզնում հասարակ ծխախոտի (մախորկայի)  
լայն տարածվելը հետեյալ հանգամանքներով ե  
բացատրվում.—առաջինը՝ մախորկան կլիմայի ու  
հողի վելաբերյալ պահանջկոտ չե, և նրա մշա-  
կությունը գրեթե ամենուրեք ե հնարավոր,  
այնինչ դեղին ծխախոտները տաք և բավարար

խոնավ կլիմա ունեցող յերկրներում կարող են  
աճել (մեզանում միայն Ղրիմում, Կովկասում և  
Թուրքեստանի վոռոգված վայրերում): Յեր-  
կըռդը, վոր մյուս ծխախոտների հանդեպ մա-  
խորկան ավելի բերք տվող ե. մինչդեռ դեղին  
ծխախոտները մեկ դեսիատինից  $30-50$  փութ  
բերք են տալիս (տաճկական ծխախոտը) և  $60-$   
 $80$  փութ (ամերիկականը), մախորկան տալիս ե  
 $100-150$  փութ և ել ավելի բերք։ Այսպիսով  
բնակչությանը գրեթե մախորկայի մշակույթն ե  
ավելի ձեռնտու։ Իսկ ինչ վերաբերում ե ծխա-  
խոտի տեսակների ճաշակի արժանիքներին, Խ. Ս.  
Հ. Մ. կ բնակչությունն իր մասսայի մեջ՝ հան-  
ձինս բանվորների ու գյուղացիների, չկարողա-  
նալով թանգարժեք ծխախոտների ծախսը քաշել,  
ակամայից եժանագին մախորկան ե գերա-  
դասում։

Մախորկայի մշակության գլխավոր (արդյու-  
նաբերական) շրջանները մեզնում Զերնիգովի,  
Պալտավայի, ինչպես և Տամբովի նահանգներն  
են, վորոնք, սրա հետ միասին, ճաշակի կողմից,  
մախորկայի ամենաընտիր տեսակներն են տալիս։

Խ. Ս. Հ. Մ. կ ծխախոտը յերկրի բավակա-  
նին կարևոր հարստությունն ե, վորովհետև մենք  
մոտ  $\frac{1}{2}$  միլիոն փութ ծխախոտ ու ծխախոտից  
պատրաստած ապրանք եյինք արտահանում։

Սրա հետ միասին ոռւսական ծխախոտն արտասահմանում մեծ ժողովրդականություն եր վայելում (մանավանդ պլանակները): Ճիշտ և, մենքինքներս ել արտասահմանյան ծխախոտի (որինականգլիական ծխախոտի, Հավանայի սիդարների և այլն) պահանջ ենք ունեցել, բայց մեզ մոտ արտասահմանյան ծխախոտի ներմուծումն ավելի քիչ գումարի յե յեղել, քան հայրենական ծխախոտի արտահանությունը միջազգային շուկա: Այսպես՝ 1913 թվականին մենք 10 միլիոն ռուբլու ծխախոտ ու ծխախոտից պատրաստած ապրանք ենք արտահանել, մինչդեռ արտասահմանյան ծխախոտ 1 միլիոն ռուբլու յեր ներմուծված: Այսպիսով ծխախոտի արտահանությունը յոթակատիկ գերազանցել եներմուծման և, հետևապես, ծխախոտի մեր հաշվեկշիռն ակտիվ ե յեղել:

Յերկրում, ժողովրդի տնտեսության ընդհանուր քայլայման հետևանքով, ծխախոտի մշակությունն ել ընկավ: Առ 1921 թվականը ծխախոտի ցանքսի տարածությունը գրեթե 11 անգամով կրճատվեց: Բայց հետո այդ մշակութի արագ վերականգնումն սկսվեց: 1923 թվականին ծխախոտի ցանքսի տարածությունն արդեն 35 միլիոն դեսիատին եր դարձել, իսկ ծխախոտի բերքը՝ 3,750 հազար փութ, վորից 3,000 հազար փութը մախորկային եր ընկնում:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԸ.

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՏՎԱԾ  
ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.


ԽՈՇՈՐ ՅԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ.

Խոշոր յեղջերավոր անասունների քանակը (50 միլիոն գլուխ), Թուսաստանը յերկրագնդի վրա յերրորդ տեղն եր բռնում, յետ մնալով առաջինը՝ Հնդկաստանից (137 միլիոն գլուխ), իսկ յերկրորդը՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից (64 միլիոն գլուխ): Սակայն պետք են շենք, վոր յեթե ինկատի չառնենք անգամ տվյալ յերկրի բնակչության քանակը, անասունների այս կամ այն քանակությունն ինքնըստինքյան դեռ վերջնի բարորության ցուցանիշը չե: Իսկ յեթե մենք հաշվենք ամենակարևոր յերկրներում յուրաքանչյուր 100 շնչին հասնող խոշոր յեղջերավոր անասունների քանակը, ապա, ինչպես № 5 դիագրամմայից ե յերեսում, դուրս կզա, վոր Խ. Ա. Հ. Մ. ում անասնապահության վիճակն ամենեին ել նպաստավոր չե:

Յեվ այսպես, դիագրամման ցույց ե տալիս, վոր խոշոր յեղջերավոր անասունների սպասավորմամբ Թուսաստանն ամենահետին տեղերից մեկն եր բռնում: Սակայն այս իսկ տեսակետից մենք տեսնում ենք, վոր այնպիսի առաջա-

վոր յերկրներ, ինչպիսին Գերմանիան և Ֆրանսիան են, խոշոր յեղջերավոր անասուններով Ռուսաստանից միքիչ են ավելի սպասավորված, իսկ Անգլիան՝ նույնիսկ Ռուսաստանից ել վաս: Յուրաքանչյուր 100 տնօքին ընկերող անասունների քանակը (մինչեւ 1914 թ. պատերազմը).

### Յուրաքանչյուր

Արդյունաբերություն	Արդենտինայում		449 դլուհն
	Կանադայում		133 "
	Հյուս.Ա.Միաց.նահ		82 "
	Իտանիայում		87 "
	Ֆրինլանդիայում		50 "
	Էվերյարիայում		43 "
	Ֆրանկֆուրտ		36 "
	Գերմանիայում		34 "
	Բրուսականում		31 "
	Անգլիայում		26 "

№ 5 (տ. եջ 38).

Ի՞նչով բացատրենք այս Հենց նրանով, վոր, առաջինը, այս յերկրները համեստ քանակով (բնակչության քանակի հետ համեմատած) անասուններ ունենալով հանդերձ, նրա մթերքներից շատը գործ են ածում ի հաշիվ ուրիշ յերկրներից կամ իրենց

գաղութներից զգալի չափով ներմուծվող անասունների (և նրանց մթերքների). յերկրորդը նրանով, վոր այս յերկրներում գլխավորապես ընտիր անասնաբուծություն ե տարվում, վոր և մեծ քանակությամբ ոգտակար բաներ ե տալիս (միս, կաթնամթերք և այլն):

Յեվ իրոք, յեթե մենք համեմատենք մսի գործածությունը Ռուսաստանում և արտասահմանում, ապա կտեսնենք, վոր մարդագլուխ գործածած մսով Ռուսաստանից շատ ու շատ գերազանցում են նույնիսկ այնպիսի յերկրներ, վորոնք չնչին քանակությամբ խոշոր յեղջերավոր անասուններ ունեն: Այս մեզ ցույց ե տալիս բերված № 6 դիագրամման:

Մոտավորապես նույնպիսի պատկեր ել կը ստացվի, յեթե մենք համեմատենք կաթի գործածությունը Խ. Ս. Հ. Մ. ռում և արտասահմանում. Խ. Ս. Հ. Մ. ռում ամեն մի բնակչին տարեկան միջին թվով՝ 7 դույլ կաթ ե ընկնում, մինչդեռ ֆրանսիայում՝  $2\frac{1}{2}$ , Գերմանիայում՝ 4, Զվիցերիայում՝ 5, իսկ Դանիայում՝ 9 անգամ ավելի:

Իհարկե, մեծ նշանակություն ունի անասունների վորակյալ կողմը. Այնպիսի յերկրներում, ինչպիսին Անգլիան, Հոլանդիան, Բելգիան ու Գերմանիան են և այլն, կովի միջին քաշը (40—45 կութ) յեռակի գերազանցում ե ռուսական կովի

քաշին (13—15 վութ), իսկ կաթնավետությամբ  
(տարեկան 300—500 դույլ) ռուսական կովերի  
կաթնատվությանը (տարեկան 120—150 դույլ)  
նույնպես գերազանցում է:

Մի ենչի գործադրած միսը տարբեր յերկրներում.

(Մինչեւ 1914 թ.  
պատերազմը).

(Տարեկան,  
ֆնտերով)

Հ. Ա. Միաց. Նահանգներ  110

Անգլիա  100

Գերմանիա  80

Կանադա  80

Ֆրանսիա  75

Նախկ. Ավստրո-Հունգ.  60

Ռուսաստան  25

№ 6 (ա. եջ 40).

Խոշոր յեղջերավոր անասունների մասին  
խոսելիս կաթնատու անասուններն ու մնացու  
անասունները պետք է զանազանենք:

Կաթնատու անասնաբուժությունը Խ. Ա. Հ.

Մ. ի յեվրոպական ժամանակակիցների շրջանումն է ամենաշատ զարգացումն ստացել։ Առանձնապես հոչակվում են Խալմազորի (Արխանգելսկի նահանգ) և Յարասլավի անասունների ցեղերը։ Խ. Ս. Հ. Մ. ում կաթնատու անասնապահության հետ միասին մեծապես զարգացել է նաև յուղագործությունը, մանավանդ Վալոգդայի նահանգում և Արևմտյան Սիբիրում։ Շնորհիվ սառցարան-վագոններ ու սառեցնող նավեր հնարելուն, Սիբիրի մեր յուղն սկսեց ահագին քանակությամբ արտահանվել. արագացրած հատուկ գնացքներով (սառցարան-վագոններով) Սիբիրի մեր յուղը Բալտիկ ծովի նավահանգիստներն երբ բերվում, ուր հիշյալ գնացքների գալուն սպասում եյին սառեցնող վագոնները, վորոնք մեր յուղն ընդունում և ուղարկում եյին արևմտյակապական յերկրներ։ Բայ յուղի արտահանության (մոտ  $4\frac{1}{2}$ —5 միլիոն փութ) միջազգային շուկայում մենք յերկրորդ տեղն եյինք բըռնում, առաջնությունը տալով միայն Դանիային, վորը մոտ  $5\frac{1}{2}$  միլիոն փութ եր արտահանում։ Սակայն, չնայած մեր կաթնատու անասունների հետամնացության, մեր յուղագործությունը յերկրի խոշոր հարստությունն եւ ու մեր արտաքին առևտուրի հետագա զարգացման դեպքում լայն հեռանկարներ եւ բաց անում։ Իսկապես,

յեթե չիներ համաշխարհային պատերազմն իր հետագա բոլոր բարդություններով, մենք, անկասկած, Դանիայից կանցնեյինք, վորովհետև մեր յուղի արտահանության զարգացման թափով (տեմպով) Մուսասատանն աշխարհի մյուս պետությունների առջևից եր գնում (1911 թ. մեր յուղի արտահանությունը 3,4 միլիոն փութ յեղավ, իսկ 1913 թ. արդեն 4,8 միլիոն փութ):

Ինչ վերաբերում ե մսացու (սպանդի) անսառւններին, ապա վերջինները մեծ քանակությամբ պահպում են տափաստանի շրջաններում և Ստոր-Վոլգյան շրջանում, Հյուսիսային Կովկասում և մանավանդ Կիրգիզիայում, այլ և այնպիսի շրջաններում, ուր անասունները հաջող կերպով կարող են կերակրվել շաքարի ճակընդեղի, ողեքաշության արտադրությունների չեչով (թափթփուկներով) և այլն, այսինքն՝ Ռէկրայնայում ու Վարոնեժի, Տամբովի և Կուրսկի նահանգներում ու Դոնի շրջանում:

Սակայն մոի տնտեսության ասպարիզում մեր հաշվեկշիռը, ըստ արտաքին ապրանափոխության, առայժմ դեռ մեր ոգտին չի խոսում: Մինչև 1914 թ. պատերազմը, ըստ անասունների, նրանց մոի, ճարպի, կաշվի և մորթու ապրանափոխության, մենք պասսիվ հաշվեկշիռ ենք ունեցել: Մասնավորապես ակտիվ հաշվե-

կշիռ մենք սիայն մսի անհասլ (չպատրաստած) կաշիներից և մասամբ ել մորթիների (փափուկ մորթեղենի) արտահանությունից ենք ունեցել:

Պատերազմն ու հեղափոխությունը մեր խոշոր յեղջերավոր անասունների վրա մեծ չափով անդրադարձան, թեև ավելի քիչ, քան մանրը անասունների (վոչխարների և այծերի) վրա: Ամենից շատ խոշոր յեղջերավոր անասունների մատղաշ մասը տուժեց. հետո ցուլերն ու յեղներն են գալիս. ամենից քիչ կովերն են տուժել:

Տնտեսագետների հաշվով, 1916-ից մինչև 1921 թվականի ընթացքում խոշոր յեղջերավոր անասունների մատղաշ մասը  $40^{\circ}/_0$  ե պակսել, ցուլերն ու յեղները՝ մինչև  $29^{\circ}/_0$  և կովերը՝  $11^{\circ}/_0$ :

## ԶԻԵՐ.

Զիերի ընդհանուր քանակով մենք աշխարհում առաջին տեղն եյինք բռնում. 1914 թվի պատերազմից առաջ հաշվում եյին 33 միլիոն գլուխ, վորը գերազանցում ե ձիերի համաշխարհային քանակի կիսին (մոտ 60 միլիոն գլուխ): Սակայն ձիերի այս քանակն ամենին ել չեր բավարարում Խ. Ռ. Հ. Մ. բնակչության պահանջը և ըստ ձիերի սպասավորության աստիճանի, համաշխարհային տնտեսության մեջ ամենևին ել առաջին տեղը չեյինք

բոնում: Ստորև բերած դիագրամման ցույց է  
տալիս զանազան յերկրներում բնակչության  
յուրաքանչյուր 100 շնչին ընկնող ծիերի թիվը  
(մինչև 1914 թ պատերազմը):

Զանազան յերկրների բնակչության 100 շնչին  
ընկնող ծիերի թիվը  
(մինչեւ 1914 թիվի պատերազմը):

Արգենտինայում



116 ♀Հուիս

Կանադայում



41 ..

Միաց. Նահանգն.



25 ..

Դանիայում



21 ..

Իռլանդիայում



21 ..

Ֆրանսիայում



.. ..

Գերմանիայում



8 ..

Անգլիայում



7 ..

№ 7.

Այս դիագրամմայում աչքի յե ընկնում այն  
հանգամանքը, վոր, ըստ ծիերի սպասավորու-  
թյան, Ռուսաստանը Գերմանիայից, Ֆրանսիա-  
յից ու Անգլիայից բարձր եւ Սակայն այս հան-

գամանքը հիշյալ յերկրների հանդեպ նշածուղ-  
ղությամբ մեր առավել բարորությունը չպիտի  
վկայի, Վերջինները ձիերի այնպիսի պահանջ  
չունեն, ինչպես Խ. Ա. Հ. Մ.-ն. 1) Այս յերկը-  
ներում մեքենայական տրանսպորտի լայն զար-  
գացումն ենք տեսնում, 2) մասնավորապես գյու-  
ղատնտեսության առավել մեքենացումն, 3) այս  
յերկըներում ժողովրդական տնտեսության պայ-  
մանները բոլորովին այլ են, քան Խ. Ա. Հ.  
Մ.-ում. այստեղ հողագործությամբ պարապող  
մարդկանց այնպիսի տոկոս չկա, ինչպես մեզ-  
նում ե և, բացի այդ, բնական, տեղական ու  
հողոգտագործման մեր պրիմիտիվ պայմանները,  
հանքային նյութերով պարարտացնելու թույլ կի-  
րարկումը և այլն, պահանջում են ձիերի ավելի  
մեծ քանակություն պահել, քան այդ անհրաժեշտ  
ե արևմտայեվրոպական պետությունների մեջ։

Մինչդեռ Ռուսաստանի համար մատնանշած  
ձիերի քանակը (100 շնչին 21 դլուխ) դարձյալ  
ամենաին չի բավարարում մեր պահանջները։  
մասնագետների հաշվով դուրս ե դալիս, վոր  
մեր գյուղական տնտեսությունների մեկ յեր-  
բորդը ձի բոլորովին չունի, տնտեսությունների  
կեսը միայն մեկական ձի ունեն, իսկ գյուղա-  
կան ծխերի միայն մեկ քառորդը բավարար քա-  
նակությամբ ձի ունի։

Ընդումին մենք դեռ պետք են նշենք, վոր վորտկի կողմից մեր գյուղատնտեսական ձիերն Արևմտյան Յեվրոպայի և Ամերիկայի պետությունների ձիերից շատ են յետ մնում. ոռոսական ձիու միջին կենդանի քաշը 18 ֆութ ելինում, Փրանսիականինը՝ 28, ամերիկականինը՝ 48, իսկ Անգլիայում ծանրաքարշի կշիռը 55 ֆթի յեն հասնում:

Մեզնում բարձր չեր կանդնած նաև բուծարանային ձիաբուծությունը, վորը նպատակ ուներ ընտիր ձիեր բուծել. մինչև 1914 թվի պատերազմը Ռուսաստանում վերջիններն ընդամենը 200,000 գլուխ եյին հաշվում։ Ճիշտ ե, ցեղերից շատերը մեծ ժողովրդականություն եյին վայելում։ Այսպես, տեղական ձիաբուծարաններում բուծած ոռոսական ցեղերից առանձնապես հոչակվում են Արյոլի ոիսակները (արտզընթացները) և Վարոնեժի բիտյուզները (ծանրաքարշները)։ Արյոլի ոիսակները նույնիսկ արտահանում եյին Ամերիկա (Արգենտինա,) ուր նրանք ընտիր արշավաձիեր արտադրողներ եյին համարվում։ Պատերազմի ու հեղափոխությունը մեր ձիաբուծության վրա մեծ չափով անդրադարձան-բուծարանի ձիերի նշած քանակից ներկույումս 10 հազար ել չի պահպել։ Նրանցից առանձնապես աղքատացել են Ուկրայնան, վոր-

տեղից գերմանական ոկկուպացիայի ժամանակ  
ահազին քանակությամբ ընտիր ձիեր են ար-  
տահանվել։ Խ. Ա. Ռ. Ուստի ձիերով ամենա-  
հարուստ շրջաններն են՝ Միության յեվրոպա-  
կան մասի ամբողջ հարավ-արևելքը (այդ թվում  
և Հյուսիսային Կովկասը) և առանձնապես Կիր-  
պիդիան։ այստեղ տափաստաններում զարգա-  
նում եր այսպես կոչվող ջոկի անասնաբուծու-  
թյունը, վորը տեղական ժողովրդի զլխավոր  
զբաղմունքն եւ։

Պատերազմն ու հեղափոխությունը Միու-  
թյան ձիերի քանակի վրա ել անդրադարձան,  
բայց համեմատաբար քիչ, քան մանր անասուն-  
ների վրա, քան յեզների ու ցուլերի և խոշոր  
յեղջերավոր անասունների մատղաշ մասի վրա։  
Ամբողջ Միության մեջ ձիերի քանակը  $24^0/0$ -ով  
կը ճատկեց։

Ապագայում, ձիաբուծության նկատմամբ  
և, ինչպես և խոշոր յեղջերավոր անասուն-  
ների նկատմամբ (մասամբ ել մանրերի), պըո-  
գրեսսը վոչ այնքան քանակական, վորքան վո-  
րակական ել լինելու։ Մեր գյուղատնտեսության  
աստիճանական զարգացումը, վորն այժմ ամ-  
բողջ տնտեսության զարգացման հետ միասին  
մեծ թափով պետք ել առաջ գնա, քան ցարա-  
կան շրջանում, աստիճանաբար կփոխի մեր վե-

ըաբերմունքը դեպի անասունները և լնտիթ  
անասնաբուժյանն առաջին տեղը կտա, ինչ-  
պես մենք այդ տեսնում ենք Արևմտյան Յեվ-  
րոպայի տնտեսությունների մեջ։ Սրա հետ  
զուգընթաց կմեծանա նաև ոռոսական ձիերի  
նշանակությունը միջազգային շուկայում։

Պայետք ե մոռանալ, վոր չնայած մենք ձիե-  
րով քիչ ենք ապահովված, ու միջին թվով նրանց  
վորակը բարձր չե, այնուամենայնիվ մենք ձիերի  
արժեքավոր ցեղեր շատ ունենք, ու մեր ձիերի  
արտահանությունը միշտ ել գերազանցել ե ներ-  
մուծման.—1914 թվի պատերազմից առաջ մենք  
100 հազար գլուխ ձի արտահանեցինք, մինչդեռ  
նրանց ներմուծումը միայն 20 հազար գլուխ  
յեղավ։

### ՎՈՉԽԱՐՆԵՐ.

Վոչխարների քանակով (մինչև 1914 թ. պա-  
տերազմը մոտ 80 միլիոն գլուխ) Ռուսաստանն  
աշխարհում յերրորդ տեղն եր բռնում, քիչ յետ  
մնալով միայն Ավստրալիայից (85 միլ.) և Ար-  
գենտինայից (83 միլիոն)։ Ռուսաստանի յուրա-  
քանչյուր 100 բնակչին միջին թվով 52 վոչխար  
եր ընկնում։ Իսկ յեթե Յեվրոպական Ռուսաս-  
տանն առանձին և ասիականն առանձին վերցնենք,  
առաջինում 100 բնակչին 34 վոչխար կընկնի,  
մինչդեռ վերջինում արդեն 75։ Այս, իմիջի այլոց,

հասկանալի յե. Խ. Ս. Հ. Մ..ի ասիական մասում մենք վաչկատուն (քոչվոր) ժողովրդի զըլխավոր մասսա ունենք, վորի համար անասնաբուծությունը (մասնավորապես վոչխարաբուծությունը) հիմնական զբաղմունք է:

Բնակչությունը վոչխարներով ապահովելու տեսակետից առաջին տեղը անդրովկիանոսյան յերկրներն ենին. կանգնած: Այսպես, Ավստրալիայում յուրաքանչյուր 100 բնակչին 2000-ից ավելի վոչխար եր ընկնում, Ուրագվայում՝ 1800-ից ավելի, Արգենտինայում՝ մոտ 1000, Հարավ-Աֆրիկական Միության մեջ՝ 600 և այլն:

Արևմտյան Յեվրոպայում վոչխարաբուծությունն զգալի չափով փոքր թվեր ե տալիս. Գերմանիայում յուրաքանչյուր 100 բնակչին 9 վոչխար եր ընկնում (մինչև 1914 թ. պատերազմը), Իտալիայում՝ 31, Ֆրանսիայում՝ 37 և այլն: Ռուսաստանից շատ միայն Բոլգարիայում ենին հաշվում (100 շնչին՝ 183 գլուխ), Ռումինիայում՝ (70 գլուխ), Սլանիայում՝ (76 գլուխ) և Անգլիայում (65 գլուխ):

Իրենց բրդի վորակով վոչխարները բաժանվում են կոշտամազերի յեւ քնքշամնորթների (կամ մերինոսների): Յերկրագնդի յերեսի վոչխարների ամբողջ քանակից (1914 թ. պատերազմից առաջ մոտ 500 միլիոն) քնքշամորթնե-

րին մեկ քառորդն եր բաժին ընկնում։ Սակայն Ռուսաստանում քնքշամորթ վոչխարների տոկոսը շատ պակաս եր. մինչև անցյալ դարու 80-ական թվականները նրանք 12 միլիոն գլուխ եյին հաշվում, իսկ 1914 թ. պատերազմից առաջ՝ միմիայն 5 միլիոն գլուխ։

Ընդհանրապես պետք են նկատել, վոր անցյալ դարու վերջերից վոչխարաբուծությունն սկսեց զգալի կերպով ընկնել, այն ել վոչ միայն Ռուսաստանում, այլև վողջ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ, Կոչխարաբուծության այս անկումը կապված է ՅԵՎՐՈՊԱՅԻ մեր եժանագին. արոտատեղիների աստիճանաբար չքանալու հետ, արոտատեղերը գյուղատնտեսական ավելի ձեռնտու աղբյուրների հատկացնելու հետևանքով։ Այս իսկ պատճառով ել Խ. Ա. Հ. Մ.-ում փոքրիշատե հաստատուն վոչխարաբուծությունը ծայրամասերում եղանակում (Կիրգիզիա, Կովկաս և Ղրիմ), կամ այնպիսի տեղերում, ուր ավելի արժեքավոր (քնքշամորթ) ցեղն են աճում։ Սակայն մեզնում հենց այս վերջիններն ել, ինչպես մենք վերելու արդեն նշել ենք, նույնպես սկսեցին պակասել։

Խ. Ա. Հ. Մ.-ում կոշտամազ վոչխարները փոքրիշատե աճում են ամենուրեք, իսկ քնքշամորթները՝ հարավում։ Բայց կոշտամազների մեջ կան այնպիսի ցեղեր, վորոնք իրենց այս

իամ այն արժեքներով են հոչակվում. Այսպես,  
Խ. Ս. Հ. Մ.-ում հետեւյալ ցեղերն են հոչակ  
վայելում. 1) Ռամանովի (Յարասլավի նահանգ),  
վորը մուշտակացու գերազանց մորթիներ ե  
տալիս. 2) Կարակուլի (Բուխարայի), վորը ոճիքա-  
ցու (յախացու) «կարակուլի» ընտիր մորթի  
յե տալիս. 3) Դմակավոր, վորը հոչակված ե  
իր համեղ մսով, մանավանդ ճարպով, վորն իբրև  
ճարպի հատուկ կուտակում—դմակ, նրա հե-  
տույքի և ագու վրա յե գոյանում. Վերջինը 20  
ֆունտ, իսկ յերբեմն ել մինչև մեկ փութ գե-  
րազանց համ ունեցող (առանց անախորժ, տարո-  
բինակ համի, վորը հատուկ ե վոչխարների շատ  
մթերքների) ճարպ ե տալիս:

Այնուամենայնիվ Խ. Ս. Հ. Մ.-ի բնական  
պայմաններն այնպես են, վոր անյտեղ վոչխա-  
րաբուծությունն առանձին հաջողությամբ կարող  
եր զարգանալ. Մեզնում այդպիսի շրջաններն  
են՝ կիրգիզիան և Թուրքեստանը, վորոնք, միա-  
սին վերցրած, իրենց մեծությամբ յետ չեն  
մնում Ավստրալիայից, և վորոնց ընդարձակ ու  
եժան արոտատեղերում վոչխարները տարին  
տասներկու ամիս արոտով կարող են ապրել:

Չնայած վոչխարով համեմատաբար հարուստ  
լինելուն, Ռուսաստանն, այնուամենայնիվ, զգալի  
չափով վոչխար ե ներմուծել, քան արտահանել եւ:

Այսպես, 1910—1912 թ. թ. ընթացքում Խուսաստանը տարեկան միջին թվով 18 հազար գլուխ վոչխար ե արտահանել, մինչդեռ ներմուծել ե  $\frac{1}{2}$  միլիոն գլխից ավելի, վորը մեր քնքշամորթ վոչխարների քչությամբ ե բացատրվում:

Նմանապես արտաքին ապրանափոխության մեջ բրդի արտահանությունից ու ներմուծումից պասսիվ հաշվեկշիռ ենք ունեցել:

1901-ից մինչև 1914 թ. ընթացքում մենք  $\frac{1}{2}$ -ից մինչև 1 միլիոն փութ բուրդ ենք արտահանել, իսկ ներմուծել ենք՝  $1\frac{1}{2}$ -ից մինչև 3 միլիոն փութ։ Բայց վորովհետև մենք համեմատաբար եժանագին ու կոշտ բուրդ ենք արտահանել, իսկ ներմուծել ենք ավելի արժեքավորն ու նուրբը (վորը հատկապես մեր բրդեղենի ֆաբրիկաներում եր պակասում), ապա դրամի վերածելով՝ մեր պասսիվ հաշվեկշիռն առանձնապես աննպաստ յեղավ։ Այսպես, 1914 թվի ընթացքում մենք 5 միլիոն ոռորդու բուրդ ենք արտահանել, իսկ ներմուծել ենք գրեթե 50 միլիոն ոռորդու։

Պատերազմը, հեղափոխությունն ու քաղաքացիական կռիվները մեր մանր անասնապահության վրա առանձնապես ծանր կերպով անդրադան. վոչխարներն ու այծերը 1916-ից մինչև 1921 թ. ընթացքում  $44\frac{0}{0}$ -ով պակասեցին։

## ԽՈՉԵՐ.

Խոզելի քանակով (առ 1914 թ. 16 միլ. գլուխ) նախապատերազմյան Ռուսաստանը չորրորդ տեղն եր բոնում, այսինքն՝ անմիջականորեն գալիս եր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից հետո (61 միլ. գլուխ) Բրազիլիայից (18 միլ. գլուխ) և Գերմանիայից (25 միլիոն խոզ): Իսկ հիշյալ յերկրներում յուրաքանչյուր 100 շնչին ընկնում եր՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 69, Բրազիլիայում՝ 58, Գերմանիայում՝ 37 և Ռուսաստանում՝ 9 խոզ:

Ռուսական խոզաբուծության մեջ առաջին տեղը հասարակ (յերկարականջ) խոզն ե բոնում, վորն աչքի յե ընկնում համեմատաբար կոշտ մսով, քիչ բեղունությամբ, դանդաղ վաղահասունությամբ, մեծ հիվանդունակությամբ և քիչ քաշով, քան ընտիր խոզն ե, իսկ առանձնապես այսպես կոչվող ուրկշիրը կամ ըերկշիրը (Անգլիայում բուծած): Անգլիական ընտիր խոզը (յորկշիրն ու բերկշիրը) զիրացած վիճակում քաշը 20—25 քթի յե հասնում և հոչակված ե յուղինուրբ շերտեր ունեցող իր համեղ ու ախորժելի մսով (այսպես կոչված «մարմարե միս»): Սրա հետ միասին, անկախ մսի առատությունից, այսպիսի խոզն ուրիշ շատ տեսակետներից ել հասարակից ձեռնտու յե. 1) նա կատարյալ հասակի  $2\frac{1}{2}$

տարում ե համսում (ոռւսականը՝ 3 տարում).

2) գիրանալու համար 4 ամիս ե պահանջում (ոռւսական խողը՝ 6 ամիս). 3) անհրաժեշտ կեր (նրան գիրացնելու համար) 25 փութ ե ծախսում (ոռւսական խողի համար՝ 30 փութ): Հնտիր խողեր բուծելու շահավետություններն ակներեն:

Բերկշիրներն ու յորկշիրները հրաշալի կերպով կարող են աճել Խ. Ա. Հ. Մ. ի հարավային մասում, վորովհետև նրանք, բոլոր թված արժանիքներով հանդերձ, դեռ սակավապետությամբ ել են գերազանցում ու կարող են մեր (կոպիտ) կերով պահպել: Սակայն անհրաժեշտ ե ավելացնել, վոր անգլիական այդ յերկու ցեղերը բավականին հաջող կերպով բուծվում են ին նաև նախկին կալվածատիրական տնտեսություններում:

Մեզնում խողաբուծությունը ժողովրդական տնտեսության այն ճյուղն է, վորն ամեն կերպ պետք եր զարգացնել: Բացի մեզ հայտնի բոլոր բազմաթիվ շահավետություններից, վորոնք խոզն ե տալիս, խողաբուծությունը մեզնում լուրջ նշանակություն ունի նաև արտաքին առետրի մեջ. նա իր բոլոր աղբյուրներով միջազգային շուկայում մեզ ակտիվ հաշվեկշիռ եր տալիս: Այսպես, 1909—1913 թվականների ընթացքում տարեկան միջին թվով 94 հազար գլուխ կեն-

դանի խող ե արտահանվել, իսկ ներմուծվել ե  
36 հազար գլուխ. խողան (մազերի հետ) արտա-  
հանվել ե գրեթե 5 միլիոն ռուբլու, իսկ ներ-  
մուծվել ե միայն  $\frac{1}{2}$  միլիոնի և այլն։ Ընդումին  
պետք ե նշենք, վոր միջազգային շուկայում  
ռուսական խողանն ու խողի կաշին ամենաընտիրն  
են համարվում։ Այսպես, արտասահմանյան խա-  
նութներում զգալի կերպով բարձր են գնահատ-  
վում այն կաշվեղեն ապրանքները (և խողենի-  
ները), վորոնք ռուսական կաշվից (կամ խողա-  
նից) \* են պատրաստված։

Պատերազմն ու հեղափոխությունից հետո  
հաջորդող սովի տարիները կործանիչ ազդեցու-  
թյուն ունեցան մեր խողաբուծության վրա, վորը  
1916.ից մինչև 1921 թիվը  $27^0/0$ -ով նվազեց։

Մեր հայրենական անասնապահության մեջ  
պարունակվող հարստության ուրվագիծը տալով  
մենք չենք կարող ուշք չդարձնել այն հանգա-  
մանքի վրա, վոր անասունների ու նրանց կերի  
եքսպորտը չի համապատասխանում այն նշանա-  
վոր տեղին, վորը համաշխարհային տնտեսության  
մեջ մեր անասնաբուծությունն ունի։ Ինչպես

\* Սակայն, ըստ պրոֆեսոր Դենի վկայության,  
ռուսական խողի խողանի ու կաշվի հրաշալի հատկու-  
թյունները միայն մեր խողաբուծության հետամնա-  
ցությունն են ցույց տալիս. այսպիսէ խողանը (և կաշին)  
հատկապես հասարակ խողերից են ստացվում։

տեսնում ենք անասունների մթերքների արտահանության ու ներմուծման ստորև բերած աղյուսակից, անասնաբուծական մեր արտահանության հաշվեկշիռը միայն շնորհիվ յուղի աճազին արտահանության եւ ակտիվ յեղել:

Կենդանիների մթերքների արտահանությունն ու ներմուծումը (1909—1913 թ. ընթացքում միջին թվով).

(Ժիլիոն ու բլիներով)

	Արտահանություն	Ներմուծում	Արտ. գերազանց. + ե, իսկ ներմ. -
Կենդանի ձիեր . . .	11,2	1,6	+ 9,6
Խոշոր յեղջեր. անաս.	0,3	5,8	- 5,5
Մանր » »	0,2	3,7	- 3,5
Խոզեր . . . . .	6,2	0,5	+ 5,7
Ընդ. կենդ. անասուն	17,9	11,6	+ 6,3
Միս (բացի թոշ. մսից)	6,6	3,3	+ 3,3
Անասունի ճարպ .	0,1	14,4	- 14,3
Զանաղան կաշիներ	48,2	53,2*	- 5,0
Բուլղ . . . . .	10,0	52,9	- 42,9
Խոզան և ձիու մազ .	4,8	0,5	+ 4,3
Վոսկր, յեղջ., սմբակ.			
աղիքներ, թափաններ	10,6	-	+ 10,6
Կովի յուղ . . . . .	70,4	0,8	+ 69,6
Ընդամենը	168,6	136,7	+ 31,9

\* Կաշիների ներմուծումն արտահանությունից գերազանցիլը բացատրվում է հատկապիս նրանով, վոր

Մինչդեռ միջազգային շուկայում մեր ա-  
 նասնապահության նշանակությունն այլ կրիներ,  
 յեթե մեզնում անասնապահությունը միքիչ  
 մոտենար արևմտայեվրոպական յերկրների մա-  
 կարդակին։ Կարծում ենք, վոր Հոկտեմբերյան  
 հեղափոխությունը, վորը մեր գյուղացիության  
 մեջ արթնացըց գիտակցությունն ու տնտեսու-  
 թյունը վարելու նոր, ավելի կատարելագործված  
 միջոցներ վորոնելը, լուսավորության ու գործ-  
 նական գիտելիքների ծարավը, հեղափոխությունը,  
 վորը կալվածատիրական ընտիր հողերի վրա  
 ստեղծեց խորհրդային տնտեսություններ, վորոնք  
 մոտիկ ապագայում մեր ցուցադաշտերն են լի-  
 նելու, — պետք ե հուսալ. Վոր մեր գյուղատնտե-  
 սությունը մեռյալ կետից կշարժի ինչպես դե-  
 պի հողագործության, այնպես ել անասնապա-  
 հության բարգավաճման ուղին։ Բայց անասնա-

---

հասլած կաշիների ներմուծումը գերազանցում ե ար-  
 տանանության, մինչդեռ անհասլ կաշիներն ու մորթի-  
 ները (փափուկ մորթեղենը) մենք զգալի չափով շատ  
 ենք արտահանել, քան ներմուծել ենք, ինչպես մենք  
 այդ կարող ենք տեսնել արտահանության ու ներմուծ-  
 ման գումարներն առանձին աղբյուրների բաժանելուց  
 (միլիոն ռուբլիներով):

	Արտահ.	Ներմ.
Անհասլ կաշիներ . . .	30,6	17,5
Հասլած » . . .	1.0	19,8
Փափուկ մորթեղեն . .	16,5	15,8
	48,2	53,2

պահությունը պատշաճ կերպով զարգացնելու  
համար հարկավոր են միջոցներ, վորոնք նրա զար-  
գացման նպաստեն ավելի վորակական, քան թե  
քանակական կողմից:

Ըստսմին մեր անասունների վորակի լա-  
վացումն ինքնըստինքյան մեզ կտանի նաև դեպի  
նրանց քանակի ավելացումը՝ Այս (վորակի) ուղ-  
ղությամբ կարեոր են ինչպես ուղղակի, այնպես  
ել անուղղակի միջոցներ:

Ուղղակի միջոցները գյուղացիներին անմի-  
ջականորեն ընտիր անասուններ մատակարա-  
րելն ե, իսկ անուղղակի միջոցները՝ ընտիր անա-  
սուններով բեղմափորող կայանները շատա-  
ցնելը, անասնաբուժական հսկողության լավ  
հիմքերի վրա դնելը (մեր անասունները համա-  
ճարակից անչափ տուժում են), ցեղերի լավաց-  
ման խրախուսանքը (պրեմիաներ տալը և այլն),  
արտահանության գործը վարող հիմնարկների  
կողմից գյուղացիների անասնաբուժության  
մթերքների սպառումը հեշտացնելը և այլն:

### ԸՆՏԱՆԻ ԹՌՉՆԵՂԵՆ.

Տանու թոշնաբուժությամբ մեզնում, կա-  
րելի յե ասել, ամեն մի տնտեսություն պարա-  
պում ե: Բայց այս զբաղմունքն առավելապես  
տնային բնույթ ե կրում. մեզնում հասարակ

թոչուններ են պահվում ու թողված են ինքնագլուխ, այսինքն՝ նրա համար առանձին շինություններ չեն շինում, նրա սեռական կյանքի վրա հսկողություն չունեն, նրան հատուկ կտերով չեն պահում և այլն։ Այդ իսկ պատճառով այդպիսի (հասարակ) թոչունը մանր է, հիվանդությունների ավելի յե յենթակա և քիչ ձռւածող է. այսպես, մեր հավը տարեկան միջին թվով 70 ձռւ յե ածում, մինչդեռ ընտիրը՝ 200-ից ավելի։

Մեր ընտանի թոչունի մեջ առաջին տեղը (բանակով) հավերն են բոնում. հետո գալիս են բաղերը, սագերն ու հնդկահավերը։ Իսկ հավերն առանձնապես շատ են պահվում։ Մեզնում թըռչնաբուծությունն առավել զարգացումն ստացել է Ռուսաստանի կենտրոնական մասում (գլխավորապես Վարոնեժի, Տամբովի և Նորանց հարեան նահանգներում) ու հարավարևմտյան Ռուսաստանում, այլև մեզնից անջատած մերձբալտյան նահանգներում։ Այս տեղերում արդեն մի շարք այնպիսի տնտեսություններ են ծագել, վորոնք ընտիր թոչնաբուծությամբ եյին պարապում։

Սակայն, չնայած մեր արդյունաբերական թոչնաբուծության թույլ զարգացման, չնայած, ընդհանրապես, ոռւսական թոչնաբուծության

ցած մակարդակին, վերջինը մեր տնտեսության մեջ սկսում ե աչքի լնկնող դեր խաղալ, իսկ առանձնապես՝ մեր արտահանության առևտրի մեջ:

Ամենից առաջ անհրաժեշտ ե նշել այն ահազին դերը, վոր մեր արտահանության առևտրի մեջ ծուն սկսեց խաղալ: Զվի արտահանությունը, վորը  $1/4$  միլիոն հատով սկսել ե անցյալ դարու կիսից, սկսեց ուժեղ կերպով աճել: 1913 թվին մենք արդեն 4 միլիարդ հատից ավելի – 90 միլիոն ռուբլի գումարի ձու արտահանեցինք ու ձվի միջազգային շուկայում առաջին տեղը բռնեցինք: Իսկ մեր արտահանության առևտրի մեջ, ըստ արժեքի, ձվի արտահանությունը չորրորդ տեղը բռնեց, այսինքն՝ հետնյալը հացից, փայտից ու վուշից հետո:

Բացի այդ, մենք զգալի քանակությամբ կենդանի և կոտորած թոշուն ենք արտահանել և ավելի շատ, քան ներմուծել ենք: Այսպես, 1909–1913 թվականների ընթացքում մենք միջին թվով արտահանել ենք (ներմուծած 168 հազար հատի դիմաց) 10 միլիոնից ավելի կենդանի և կոտորած թոշուն (վորսի թոշունների հետ միասին)  $14\frac{1}{2}$  միլիոն ռուբլու գումարի (ներմուծման 340 հազար ռուբլու դիմաց):

Այսպիսով արտաքին ապրանափոփության մեջ թոշնաբուծությունը մեղ ինչոր ակտիվ

հաշվեկշիռ եր տալիս և, հետեապես, յերկրի լուրջ հարստությունն եր, վորն ամեն կերպ զարդացման ե յենթակա. Յեթե ուստական թոչնաբուծության ծայրահեղ հետամացությամբ մենք նըանից այսքան բարձր յեկամուտ ունենք, ապա վերջինն ինչպես կբազմապատկվեր, յեթե մեր թոչնաբուծությունը միքիչ դրված լիներ այնպիսի մակարդակի վրա, ինչպիսին արևմտայեվրոպական տնտեսություններն են, յեթե մեր ընտանի թոչունն ազնվացեղ լիներ:

Բացի այդ, ձվերի լավ ընտրությունից մենք ել ավելի յեկամուտ կստանայինք, քան այդպիսին նախապատերազմյան շրջանում ե յեղել:

Այստեղ մենք կարող ենք տեսնել ելի այն յերեսութը, վորի մասին խոսեցինք մեր հացամթերքների ու գործվածքային նյութերի արտահանության տեսությունը տալիս. անքավարար մաքուր ու լավ հացահատիկ և թույլ կերպով ընտրած ապրանքներ արտահանելիս մենք շատ բան ենք կորցրել. Այս կողմից առաջ ե գնացել Դանիան, ուր արտահանությամբ պարապող կոռպերատիվ ընկերությունները յուրաքանչյուր մատակարարողից իր վորոշ նշանով են ձվեր ընդունում, այնպես վոր, ապրանքի հատկությունը վատ լինելու դեպքում, հեշտությամբ ե գտնվում հանցավորը, վորը պատասխանագու-

թյուն ե կրում։ Պետք ե յինթաղրել, վոր արտաքին առևտրի պետականացումը մեր եքսպորտը վորակի կողմից նույնպես կավացնի, ինչպես նա արտահանվող հացի նկատմամբ այդ արեց։

### ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.

Հին, Ռուսաստանում մեղվաբուծությունը յերկրի գլխավոր հարստություններից մեկն եր (հին ժամանակներում ռուսները հարկը «մեղրով, մեղրամոմով» ու գազանի մորթիներով» եյին վճարում), իսկ այժմ մեղնում ընկած վիճակում ե գտնվում։ Սրա պատճառն այն ե, վոր մեղրի դեմ շաքարն ե մըցում, վորն ավելի եժան սթերք ե, իսկ մեղրամոմի դեմ՝ նավթը, կարտոֆիլի մոմը և ելեկտրականությունը։

Սրա հետ միասին մեղվաբուծության ամբողջ գործի վատ ձևով դնելն այս պարապմունքը դարձըրել ե քիչ շահավետ։ մեր փեթակները (մեծ մասամբ փչակային) միջին թվով 20—25 ֆունտ մեղր եյին տալիս, մինչդեռ շրջանակային փեթակից կարելի յե 1 փթից ավելի մեղր ստանալ։ կան և այնպիսիները, վորոնցից՝ տարեկան 2 փութ և ավելի։

Խ. Ա. Հ. Մ. ում մեղվաբուծությունը տարբեր շրջաններում ե տարածված (բացի հեռավոր հյուսիսից), բայց գլխավորապես Ռէկրայնայում

և Արևմտյան կողմում։ Արևմտյան Յեվրոպայում  
և Ամերիկայում մեղվաբուծությունը ճռխ կեր-  
պով ե դրված ու կատարելագործված շրջանակա-  
վոր փեթակներով ե տարվում։ Զվիցերիայում,  
Անգլիայում, Ֆրանսիայում և Հյուսիսային Ամե-  
րիկայի Միացյալ Նահանգներում զործում են  
մի շարք ակցիոներական ընկերություններ, վո-  
րոնք մեղվաբուծությամբ են պարապում։ Դրա  
համար ել այս յերկրներում մեղվաբուծության  
յեկամուտները սերից բարձր են։ Այսպես, 1910  
թվականին մեզնում 18,6 միլիոն ոռոբլու մեղը  
եր հավաքած, իսկ Հյուսիսային Ամերիկայի Մի-  
ացյալ Նահանգներում՝ 50 միլիոն ոռոբլու։ Մինչ-  
դեռ մեզնում ել մեղվաբուծությունն ամեն տե-  
սակի խրախուսանքների յե արժանի, վորովհետե-  
ռինակելի անտեսությունների փորձերով ապա-  
ցուցված ե, վոր կանոնավոր կերպով դրված  
մեղվաբուծությունը շահավետ մի արհեստ ե,  
վորն առաջին իսկ տարին իր ծախսերը հանում  
ե և հետագա բոլոր տարիներում գրեթե բոլորո-  
վին առանց ծախսերի լավ յեկամուտներ ե տալիս։  
Ծնորհիվ այն հանգամանքի, վոր մեզ մոտ զգալի  
չափով մեղրամոմ եր ներմուծվում, վորը գալիս  
եր մեզ մոտ կը ոնական ծիսակատարություննե-  
րը բավարարելու համար (հայրենական մեղրա-  
մոմի պակասի հետևանքով) մեր արտաքին առե-  
տրի մեջ մեղրամոմը պատիվ հաշվեկշիռ տվեց։

## ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ.

Շերամապահությունը մեր ժողովրդական տնտեսության մեջ աննշան տեղ էր բռնում, վորովինետե, համաձայն կլիմայական պայմանների, այդ կուլտուրան հնարավոր եր՝ միայն թուրքեստանում և կովկասում։ Բստ շերամապահության չափերի համաշխարհային տնտեսության մեջ առաջին տեղը պատկանում է Յապոնիային և Չինաստանին, վորոնցից հետո գալիս են Իտալիան, Թյուրքիան ու Ռուսաստանը։ Մինչև 1914 թ. պատերազմն այդ յերկրները տալիս եյին մետաքսի բոժոժներ՝

Յապոնիան	.	.	.	.	$9\frac{1}{2}$	միլիոն	փութ
Չինաստանը	.	.	.	.	$8\frac{1}{2}$	»	»
Իտալիան	.	.	.	.	3	»	»
Թյուրքիան	.	.	.	.	1	»	»
Ռուսաստանը	.	.	.	.	700	հազար	»

Շերամապահական մթերքների մեր արտաքին առևտրի մեջ մենք սլասսիվ հաշվեկշիռ ենք ունեցել, վորովինետե հայրենական հում մետաքսը մեր ֆաբրիկաներին չեր բավականացնում, և մենք շերամապահական մթերքների մեծ մասն արտասահմանում եյինք պատվիրում։ Այսպես, 1913 թվին մենք հետեւյալ քանակի հում նյութ ենք արտահանել ու ներմուծել (հազար փթերով).—

**Արտահանություն. Ներմուծում**

Բոժոջներ . . .	82,2	56,3
<b>Մետաքսի քոլք ու թափ-</b>		
թփուկներ . . .	38,0	75,6
Հում մետաքս . . .	0,5	91,8
<b>Մանած և վոլորած</b>		
մետաքս խայաթի . . .	0,7	17,3

Հենց միայն բոժոջները մենք ավելի շատ ենք արտահանել, քան ներմուծել ենք, Այնուամենայնիվ մնացած հում նյութը մեզ մոտ մեծ քանակությամբ ներմուծվում եր, քան արտահանվում \*:

**Խ. Ս. Հ. Մ. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**


Աշխարհիս յերեսին վոչ մի պետություն այնքան ընդարձակ անտառներ չունի, վորքան Խ. Ս. Հ. Մ. Ա. Ն. :

Ստորև բերած դիագրամման ցույց ե տալիս անտառային տարածության մեծությունը գլխավոր յերկրներում, ուր փայտի արտահանությունը գերազանցում ե ներմուծման:

\* Շերամապահությունոր ուղղությամբ զարգացնելու վերաբերյալ հետաքրքիր տվյալները (արհեստական մետաքսներ հնարելով, շերամապահության թափթեփուկներն ավելի լրիվ ոգտագործելով և այլն) կարելի յե գտնել Դ. Ռասսինկու «Պատմական ընթացքն ու շերամապահական արդի վիճակը յելկրագնդի վրա» գրքույկի մեջ:


Խ. Ա. Հ. Մ.-ի ամբողջ 522 միլիոն դեսիա-  
տին անտառային տարածությունից նըա յեվրո-  
պական մասին 130 միլիոն դեսիատին ե բաժին  
Փայտ արտահանող գլխավոր յերկրների անտառների  
տարածությունը  
(միլիոն դեսիստիկոնվ).

Խ. Ա. Հ. Մ.




592

ԿԱՆԱԴԻ




296

Հ. Ա. ՄԻԱՅԱԿԱՅ




259

ԲՐԻՏ. ՀՆԴԿԱՍՏ




24

ՇՎԵԴԻԱ




16.5

ՅԱՊՈՆԻԱ



13

ՆՈՐՎԵԳԻԱ.



6.2

№ 8 (ա. եջ 66).

Ընկնում, իսկ ասիականին՝ 392 միլիոն դեսիա-  
տին:

Բոլոր այս բազմաթիվ անտառներից մոտ  
450 միլիոն դեսիատինը պետական անտառներ  
ելին, Խ. Ա. Հ. Մ.-ի բոլոր անտառներն այժմ  
պետության սեփականությունն են:

Խ. Ա. Հ. Մ. ի անտառները յերկրի ամենակարևոր հարստություններից մեկն են։ Արտահանվող փայտի քանակով Ռուսաստանը միջազգային շուկայում առաջին տեղն եր բռնում։ Ստորև բերած աղյուսակը փայտ արտահանող ամենակարևոր յերկրների փայտի արտահանությունն ե ցույց տալիս։

1912—1913 թ. ընթացքում արտահանված ե փայտ \*։

Ռուսաստանից	463 միլ.	փ կամ համաշխ.	
		ամբողջ արտահ.	25 <sup>0</sup> / <sub>0</sub> ը
Ֆինլանդիայից	295	»	19 <sup>0</sup> / <sub>0</sub>
Հ.Ա.Ա.Նահանգներից	200	»	
Կանադայից	97	»	{ 19 <sup>0</sup> / <sub>0</sub>
Շվեդիայից	246	»	
Նորվեգիայից	36	»	{ 18 <sup>0</sup> / <sub>0</sub>
Նախկ. Ավստ.-Հունգ.	247	»	15 <sup>0</sup> / <sub>0</sub>

Սակայն արտահանվող փայտի արժեքով Ռուսաստանը մի շարք պետություններից յետ եր մնում։ Այս բացատրվում է նրանով, վոր Ռուսաստանը փայտն արտահանում եր զիսավորապես առանց մշակելու, կամ քիչ մշակած, իբրև դերաններ, շպալներ, տախտակներ և այլն, մինչդեռ մեր մրցակիցները փայտն զգալի չափով ար-

\* «Փայտագործական արդյունաբերությունը և այն վերականգնելու ուղիները», Ժ. Տ. Գ. Խ., 1921 թ., եջ 34։

տահանում ելին իբրև ֆաներային նյութ (դրվագագործական), փայտի մասսա և իբրև փայտի մշակույթի ուրիշ, համեմատաբար արժեքավոր մթերքներ:

Այնուամենայնիվ, նախապատերազմյան մեր արտահանության մեջ փայտը, արտահանության արժեքով, յերկրորդ տեղն եր բռնում, այսինքն՝ հետեւյալը հացից հետո. Ոռւսաստանում փայտի արտահանությունը շատ արագ կերպով աճեց. փայտի արտահանությունը դեռ 1910 թվականին միայն 59 միլիոն ռուբլու գումարի յեղավ, 1911 թ.՝ 142, իսկ 1913-ին՝ 163 միլիոն ռուբ.։ Բացի այդ, մենք փայտից վերամշակված մթերքներ ել ենք արտահանել՝ կուպր, ձյութ, դաթրան (սկիպիդար), փայտի մասսա և այլն. 1912 թ. այս մթերքների արտահանությունը 5 միլիոն ռուբլու գումարի յեղավ։

Ոռւսական փայտը գլխավորապես դեպի Անգլիա, իսկ հետո՝ Գերմանիա, Հոլլանդիա, Ֆրանսիա, Բելգիա և նախկին Ավստրո-Հունգարիա յեր ուղղվում։

Ճիշտ ե, մենք 50—60 միլիոն ռուբլու գումարի յել փայտեղեն ապրանք ենք ներմուծել (1913 թ.՝ 66 միլ. ռուբ.), բայց սրան պատկանում են գլխավորապես տրոպիկական անտառի մթերքները՝ կարմիր, սև և արմավենու փայտերը, կառչուկը, ձյութը, կամեղին (խեժ), բարսանը և այլն։

Չնայած վոր արտահանվող փայտի քանակով մենք միջազգային առևտրի մեջ առաջին տեղն ենք բռնում, այնուամենայնիվ մեր արտահանության քանակները դեռ ամենսկին ել չեցին համապատասխանում մեր անտառային հարըստությունների կարողությանը։ Այս յերեսում են Ռուսաստանի և մյուս յերկրների արտահանության համեմատությունից (վերև բերած դիագրամմայից)։ Այսպես, Շվեդիան, վոր 16,5 միլիոն դեսիատին անտառային տարածություն ունի, այսինքն՝ քանակով զրեթե 32 անգամով փոքր են, Ռուսաստանի համեմատությամբ միայն կրկնակի յե պակաս փայտ արտահանել։ Անտառների տարածությունը մյուս պետությունների փայտի արտահանության քանակի հետ համեմատելուց մենք ենի նույն յեզրակացությանը կգանք. Փայտով հարուստ բոլոր պետությունները համեմատաբար ավելի շատ փայտ են արտահանել, քան Ռուսաստանը։ Այս կողմից Խ. Ս. Հ. Իր մեջ հսկայական չափերով արտահանության հնարավորություններ են թագցնում։ Մեր տնտեսության ավելի նպատակահարմարության դեպքում (իսկ այժմ, խորհրդային իրավակարգում մեզնում նպատակահարմար տնտեսությունն ավելի ու ավելի շատ տեղ են նվաճում), անտառային տնտեսության ելեկտրիֆիկացիայի նախադիմ

ւայն մասշտաբով անցկացնելուց, մեր փայտի արտահանությունը խոստանում է համաշխարհային շուկայում հետզհետե այնպիսի չափեր ընդունել, վորոնք մեր անտառային հարստությունների կարողությամբ են թելադրվում։ Բայց այն միջոցները, վորոնք մեր անտառային տնտեսությունն ընդարձակելու (և փայտ արտահանելու) համար են պահանջվում, ինարկե, չեն կարող անտառի կտրատման (թեկուղ հենց նպատակահարմար յեղանակով) մեջ կայանալ. այստեղ անհրաժեշտ են առաջնակարգ կարեռություն ունեցող միշտ ընդհանուր միջոցներ՝ յերկաթուղիների ընդարձակում, անտառային շրջաններում ջրանցքների կառուցում, նույն շրջաններում փայտագործության արդյունաբերության տարածումն և այլն (փայտ սղոցելու, ֆաներ (դրվագեղեն) սղոցելու, փայտի կտորտանքը մեքենական ու քիմիական յեղանակներով մշակելու համար գործարաններ կառուցելու ձևով և այլն):

Մեր փայտի արտահանությունը, վորը հեղափոխության սկզբում ընդհատվել եր, 1922 թվից վերականգնեց, վորու, ճիշտ ե, 37 միլիոն փութ յեղավ։ Սակայն 1923 թվականը մեր անտառային արտահանությունը շատ ավելացրեց. արտահանությունն արդեն 75 միլիոն փթի յեհասել, Ընդհանուր առմամբ մեր փայտի արտա

հանությունը խոստանում ե կարճ ժամանակում  
մեր արտահանության առևտրի մեջ նախկին  
դիրքը գրավել:

Խ. Ա. Հ. Մ.-ի ԶԿՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ.

Ինչպես տեսնում ենք ստորև բերած դիա-  
գրամմայից, ըստ վիճակագրական տվյալների, ձըկ-  
ների արտադրությամբ Ռուսաստանը համաշխար-  
հային շուկայում յերկրորդ տեղն էր բոնում,  
Անգլիայից անմիջապես հետո գալով:

Սակայն, ձկների վիճակագրական հաշվի դըժ-  
վարության պատճառով, մանավանդ Խ. Ա. Հ.  
Մ.-ի համար, ուր բազմաթիվ ձկներ ավագակո-  
րեն են վորսվում (գլխավորապես հյուսիսային  
ծայրամասերում բնակվող այլազգիների կողմից),  
ուր տեղական գործածության համար գնացող  
ձուկը հաշվեառման դժվար ե յենթարկվում,  
նշած թվերը փոքրիշատե հավանական պիտի  
համարել: Դրա համար ել Ռուսաստանում ձուկն  
իրականում 69 միլիոն ֆթից զգալի չափով ավելի  
յեր վորսվում, և Ռուսաստանը ձկնորսության  
բանակով, անկասկած, առաջնակարգ տեղ էր  
բոնում:

Սակայն, յեթե ինկատի առնենք ձկան շըն-  
չազլուխ գործածությունը, ապա վերջինը, մի  
շաբք պետությունների համեմատությամբ,  
մեզնում շատ քիչ է: Այսպես, Նորվեգիայում

տարեկան ամեն մի շնչին մոտ 670 ֆունտ  
ձուկ ե ընկնում, Կանադայում՝ 141, Անգլիա-

Զկան համաժամանակին վարսը  
(Մինչեւ 1914 թ. պատերազմը, միլիոն փրեռով).

ԱՆԳԼԻԱ



73

ՌՈՒՍԻԱՆԻԱՆ



69

Հ.Ա.ՄԻԱՑՅԱՆ  
ՆԱՀԱՆԳՆԵՐ



55

ՅԱՊՈՆԻԱ



45.

ԿԱՆԱԴԻԱ



40

ՆՈՐՎԵԳԻԱ



14.

№ 9 (տ. և 72).

յում՝ 67, Դանիայում՝ 56, Ֆրանսիայում՝  
22, Հյուսիային Ամերիկայի Միացյալ Նահանգ-

ներում՝ 19, Ռուսաստանում՝ 17, Գեղմանիայում՝ 6 և այլն։ Բայց, շնորհիվ Խ. Ս. Հ. Մ.-ի ձկան ահագին հարստությունների, նրանում ձկնորսության, մանավանդ ձկնաբուծության գործը պատշաճ կերպով դնելուց\*, ձկան շնչազլուխ գործածությունը շատ անգամով կարող եր ավելի լինել։

Բայց փոխարենը, ձկնորսության արժեքով (168 միլիոն ռուբլի), Ռուսաստանը, — համաձայն պրոֆեսոր Ն. Պ. Ազանովսկու տվյալների, — աշխարհում առաջին տեղն եր բռնում։ Յերկրորդը Հյուսիսային Ասերիկայի Միացյալ Նահանգներին եր պատկանում (146 միլիոն) և յերրորդը՝ Անգլիային (118 միլիոն)։

Խ. Ս. Հ. Մ.-ի ձկան բոլոր ավագաններից ամենակարեռը Կասպյանն ե (Կասպից ծովի)։ Ռուսաստանի ամբողջ ձկնորսության կիսից ավելին այստեղ ե արտադրվում (1913 թ. այս ավագանի ձկնորսությունը նույնիսկ 45 միլիոն փությեղավ)։ Այս ավագանի ամենագլխավոր ձկներն են՝ առաջինը, այսպես կոչված փշաձուկը (красная) վորին պատկանում են ամենաարժեքավոր թափ-

\* Ուրիշ յերկրների համեմատությամբ Ռուսաստանի ձկնաբուծության դրության կարելի յե ծանոթանալ, որինակ՝ Վ. Ա. Կեդինի «Ռուսաստանի արդի ձկնորսությունը» գրքից, 1915 թ., ինչպես և Գ. Պ. Սազնովի «Թաղցրած ուժեր» մի շատ հանրամատչելի գրքույթից։

փի (осетровые) ցեղերը՝ թառափը, ստեղլյաղը,  
բելուզան և այլն, այլև որագուլի ցեղը, յեր-  
կըրդը, այսպես կոչված անփուշ (частиковая) ձուկը  
(վոքլան, հարինզը—սելյողկան, կողակը, շիղաձուկը,  
լեշը—բըրամ, և այլն): Վորսի քանակով առաջին  
տեղը վոքլան ե բոնում, վորը կասպից ավազա-  
նի ձկնորսության (ամբողջի) կեսն ե, հետո գա-  
լիս ե հարինզը, վորին ավազանի ամբողջ վորսի  
գրեթե մի քառորդն ե ընկնում, իսկ փշա-  
ծրկին՝ կասպից ավազանի ամբողջ ձկնորսության  
50%-ն եր ընկնում: Ընդհանրապես պետք ե նկա-  
տել, վոր փշածրկան քանակը, վոր տալիս ե Խ. Ս.-  
Հ. Մ.-ի սահմաններից շատ հեռու գտնվող յերկրնե-  
րում հայտնի սև ձկնկիթը, տարեցտարի զգալի  
չափով պակասում եր: Սրա պատճառները պետք ե  
վորոնել նախ և առաջ նրանում, վոր բեռնակիր  
նավերից (баржа) տարեկան միլիոնավոր փթե-  
րով մաղվող նավթը Վոլգայի ջուրը կեղառում  
եր, այս նավթը կուտակվում եր գետի այն հան-  
դարտ ծանծաղուտներում, ուր գլխավորապես  
ձկները հավաքվում եյին ձկնկիթ դնելու. նավթը  
ջրի յերեսը ծածկում եր ող բաց չթողնող բա-  
րակ թաղանթով, վորը մատղաշների վրա կոր-  
ծանիչ կերպով եր ազդում: Զկան արժեքավոր  
ցեղերի պակասելուն շատ եր նպաստում նաև  
ավազակային ձկնորսությունը—ձկնկիթ դնելուց

առաջ ձուկ վորսալը, ձկնորսությունը խիտ ուղղաններով, հայլն, վորոնց մեջ բազմաթիվ մատղաշներ եյին ընկնում ու վոչնչանում։

Սակայն պետք է ի նկատի ունենալ, վոր պատերազմն ու հեղափոխությունը մեր ձկան հարստության վրա շատ բարերար ազդեցություն ունեցան։

Զանազան պատճառների՝ քաղաքացիական կոիմսերի, ձկնորսական արտելների բաժան-բաժան լինելու, ուռկանների սուր պակասի և, մասնավանդ, նավթի ժամանակավոր կրճատման և ապա ընդհանուրապես Վոլգայի վրայով փոխադրության դադարելու հետևանքով՝ ձկնորսության պակասելը ձկան ինչպես քանակի, այնպես ել վորակի վրա նպաստավոր կերպով ազդեցին։ Ամենուրեք նկատվում է ձկների ցեղերի խոշորացում, այսինքն՝ հասունացած հասակում վորսվող ձկների մեծ քանակ, քան առաջ եր։ Այսպես, դեռ 1919 թվին Աստրախանի շրջանում 1,000 հատ վորլան միջին թվով 10 փութեր քաշում, իսկ 1920 թ.՝ գրեթե 20 փութ \*։

Ձկնորսության քանակով յերկրորդը Հեռավոր Արեվելքի ավազանն է։ Ձկնորսության կողմից այստեղ գլխավորապես նշանակություն ու-

\* «Մեր ձկնորսությունն ու նրա կարիքները» Ա. Ի. Պատյայեի և Վ. Ի. Մելյաների խմբագրությամբ. 1921 թ., եջ 8,

նեն՝ Ախոտիւ-կամչատկայի ափերն ու Ամուրի գետաբերանը։ Այս շրջանի ձկների գլխավոր ցեղերն են՝ հարինզը, կետան յեկ կուզը։ 1914 թվականի պատերազմից առաջ վերջին տարիներում առանձին նշանակություն ստացավ կետան, վորն սկսեց մեծ քանակությամբ Յեվրոպական Ռուսաստան արտահանվել, իսկ կետայի ձկների մեջ սկսեց մեծ ժողովրդականություն վայելել։ Սակայն յապոնական կապալառուների կողմից այս շրջանի ձկնորսության խոշոր մեծամասնությունը զավթվում էր (1916 թ.՝ Խաղաղ ովկիանոսի ափերի ամբողջ ձկնորսության  $84\%$ -ը)։ Այնուամենայնիվ, ներկայումս դեպի լավը խոշոր վերադարձ ե նկատվում։ Դուրս յեկավ, վոր այս տարվա (1924 թ.) սկզբին ձկնորսության մեծ մասը ոռու արդյունաբերողների ձեռքին էր։

Արալի ավագանը Տաշրենդի յերկաթուղին անցկացնելուց հետո միայն սկսեց աչքի ընկնել։ Այս ավագանի գլխավոր ձկներն են՝ կողակը, շիպը, լոքոն ու ճանառը։ Իսկ ամենից շատ այստեղ վորսվում ե կողակը, վորն արտահանվում էր տեղական շուկաներ, ինչպես և Խ. Հ. Հ. Մ. ի յեվրոպական մասը։

Ազով-Մեվծովյան ավագանը գլխավորապես տալիս ե հարինզ, թառափ, յերկանաձուկ (կեֆալ), սկումբրիա, տափակաձուկ (կամբալա), բիչկա

և այլն։ Այստեղի ձկան նշանավոր մասը գնում  
եր կոնսերվի գործարաններ, վորտեղից թիթե-  
ղյա խցած ամաններով ներքին շուկայում լայն  
վաճառքի առարկա յեր։

Բալոյան ավազանը՝ որագուլի, սիզի, կո-  
րյուշկի (հասարակ սալմոն), սալարի (հարինդի,  
տեսակ), սնետոկի, ուզորի (ոճածուկ), մինոզայի  
և այլ ձկնորսություն ե տալիս։ Այստեղ առան-  
ձին ուշադրություն ե գրավում ապազայի հա-  
մար սնետոկ պատրաստելը (նրա չորացնելը),  
վորը ոռւս ժողովրդի սիրելի ուտելիքն ե։

Ամենից շատ սնետոկ իւմեն լիճն եր տալիս։

Հյուսիս-Սպիտակծովյան ավազանը մեզ գըլ-  
խավորապես մատակարարում ե տրեսկա, հարինգ,  
սյոմզա յեվ նսովազա։ Այստեղ առանձին նշանա-  
կություն են ձեռք բերել Մուրմանի ափերը,  
վորոնք շնորհիվ իրենց հասնող գոյլֆշտրոմ տաք  
հոսանքի, չեն սառչում։ Մուրմանի շրջանը ձկնով  
խիստ հարուստ ե, բայց, ձկնորսության սեզոնի  
կարճության հետևանքով, վորը նավագնացու-  
թյան հետ ե կապված (վորովհետև ձկնորսները  
մեծ մասամբ այսպես առած ափաբնակ  
յեկվորներ են) և արտադրության գործիքների  
անկատարելագործության պատճառով, հա-  
մեմատաբար քիչ ե վորսվում այն։ Մուրմանի  
ափերը մեզ 1 միլիոն փթից ավելի ձուկ

չեյին տալիս, մինչդեռ նորվեգացիք, անգլիացիք  
և ուրիշները մեր ջրերի գոտում, կարելի յե ասել,  
չորս անգամով ավելի եյին վորսում, Բայց ար-  
տասահմանցիք հատկապես հարմարեցրած ձեկ-  
նորսական նավերով ու կատարելագործված մի-  
ջոցներով եյին ձուկ վորսում, ըստվորում վոր-  
սում եյին վողջ տարին, այլ վոչ թե ափաբնակների  
պես նավագնացության շրջանում։ Ահա մեկն  
այն պատճառներից, թե ինչու 1924 թվի մա-  
յիսի 1-ին խորհրդային իշխանությունն ոտարեր-  
կրացիներին 12 մղոնանոց գոտու սահմաննե-  
րում Յեվրոպական Ռուսաստանի ամբողջ ծովափի  
յերկարությամբ ձկնորսությունն ու գազանոր-  
սությունն արգելեց։ Զկան ու ծովային կենդա-  
նիների ստվար բազմությունը պահվում է մի-  
ջազգային դաշնադրությամբ վորոշված յերեք  
մղոնանոց գոտու սահմաններից հեռու, վորի պատ-  
ճառով ել խորհրդային իշխանությունը վորոշել  
ե հիշյալ դեկրետով պաշտպանել այն տեղական  
ընակիչների շահերը, վորոնց համար հիշյալ ար-  
հեստները գոյության հիմնական միջոցներն են։

Մեր ձկների հարստություններն ամենեին  
ել չեն ողտագործվում այնչափով, վորչափով  
վոր դրա համար հնարավորություն կա, առանց  
նրանց թիվը նվազեցնելու վաստի։ Այսպես, պրոֆ.  
Ն. Մ. Կնիպովիչի հաշվով, առանց ձկան հիմնա-

կան պաշարը վորեև կերպ նվազեցնելու՝ միայն  
մեր կասոլյան ավազանը տարեկան 70 միլիոն փ.  
ձուկ կարող եր տալ: Նմանապես ել ամենսին  
պատշաճ չափերով չեն ոգտագործվում նաև մեր  
մյուս ավազանները, մանավանդ՝ հեռավորները:  
Այսպես, Սիբիրի գետերի՝ Ոքի, Յենիսեյի և Լե-  
նայի գետախորշերում և այլն, ուր առատորեն  
պահվում են գնահատելի թառափի ու որագու-  
թեղերը, վորոնցից ընդամենը 2 միլիոն փ.  
Ե վորսվում, կարելի յե ասել, վոր արդյունաբե-  
րական ձկնորսությունը գրեթե սկզբնական վի-  
ճակում ե գտնվում, մինչդեռ գործը փոքր ինչ  
լավ հիմքերի վրա դնելով միայն, Ոքի և Յենի-  
սեյի գետախորշերը տարեկան մոտ 4—5 միլիոն  
փութ կարող ելին տալ: Հստ պրոֆեսոր Ազա-  
նովսկու հայտարարության «որագուլի ամե-  
նառաջին պաշարներն աշխարհում Սիբիրի և  
Հեռավոր Արևելքի մեր ավազաններն են պարու-  
նակում .(յերկրորդը՝ կրկնակի քիչ արտադրու-  
թյամբ՝ չյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-  
հանգներում), և Յեվրոպա արտահանելու համար  
նրանցից կոնսերվ պատրաստելը Ռուսաստանի  
ժողովրդի յեկամուտը տարեկան տասնյակ մի-  
լիոն ռուբլիներով կարող եր բարձրացնել»\*.

\*) Պրոֆ. Ն. Պ. Ազանովսկի՝ «Տնտեսական աշ-  
խարհագրության ուրվագծերը», Մ. 1, Գյուղատնտե-  
սություն, Էջ 163:

Չսայած ձկների մեր գրեթե անսահման հարըստության և նույնիսկ տարեկան զգալի ձկնորսության, մենք մինչ այժմ միջազգային շուկայում խոշոր դեֆիցիտով հաշվեկշիռ ենք ունեցել։ Մինչդեռ մենք մեր ձկնից մոտ- 1 միլիոն փութ ենք արտահանել (6—7 միլիոն ռուբլու), արտասահմանյան ձկան ներմուծումը 18 միլիոն փութ ե յեղել (35 միլիոն ռուբլու գումարի)։ Մենք զլիսավորապես հարինգ (Նորվեգիայից և Անգլիայից) և կոնսերվ պատրաստելու մեր միջոցներն արևմտա-յեվրոպականից զգալի չափով յետ են մնում ու վատ համի ձուկ են տալիս. ահա թե ինչով ե բացատրվում ձկան արտասահմանյան ներմուծման այսքան զգալի գերակշռությունը հանդեպ մեր արտահանության։ Զկան ներմուծման յերեք քառորդը հարինգին ե ընկնում (1913 թ. 35 միլիոն ռուբլու ձկան ներմուծումից 24 միլիոն ռուբլի հարինգին բաժին ընկավ)։ Մեր արտահանության մեջ աչքի ընկնող ամենամեծ դերը խաղում եյին ձկնկիթն ու փշավոր ձուկը. Այսպես, 1913 թվականին Ռուսաստանն արտաքին շուկա յե արտահանել (հաղար ռուբլիներով)։

Զկնկիթ . . . . . . . . . . 4.245

(Սրա մեջ և 3.133 ու սև ձկնկիթ)

Թարմ ձուկ (գլխավորապես փշավոր)	1.045
Յուղով համեմած և այլն . . .	84
Կենդանի ձուկ ու խեցգետիններ	290
Այլ տեսակի ձկնեղեն մթերքներ	1.532
	<hr/>
	7.343

Յեվ այսպես, ձկան մեր հարստություններըն այնքան են մեծ, վոր մենք ազատ կերպով կարող եյինք վոչ թե 69 միլիոն, այլև 100 միլիոն փթից ել շատ ավելի արտահանել։ Հեղափոխության նվաճումները—խոշոր արդյունաբերության պետականացումը և արտադրության սոցիալիզացիան ընդհանրապես, նպատակահարմար տնտեսությունը, վորը յերկրի բոլոր արտադրությունների մեջ ե կիրառվում և այլն,— մեր ձկնորսական գործի մեջ անշուշտ անհրաժեշտ բարելավումներ կմտցնեն, վորոնք ապագայում թե մեր ձկան արտադրությունը կավելացնեն և թե նրանց վորակը կբարձրացնեն։ Իսկ յեթե մեզնում պաշար պատրաստելու համար (կոնսերվ պատրաստել, աղ դնել, քամիարել—դախշինել, չորացնել, համեմել և այլն) հետզհետե կիրառվեն նաև կատարելագործված միջոցներ, ինչպես և պատշաճ չափով կարգավորվի արհեստական ձկնաբուծությունը (վորի մեջ մենք Արևմտյան Յեվրոպայից և Ամերիկայից շատ և շատ յետ ենք մնացել), ապա մենք շան-

սեր կունենա՞ք արտաքին շուկայում դուրս գա-  
լու վոչ թե պասսիվ, այլ ձկան մեր տնտեսու-  
թյան ակտիվ հաշվեկշռվ արդեն։

## ԱՐՎԱՄՈՐԹ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ.

Խ. Ս. Հ. Մ.-ն աղվամորթ կենդանիներով  
շատ հարուստ է։ Սակայն, հին Ռուսիայի հա-  
մեմատությամբ, նա աղվամորթ կենդանիներով  
սաստիկ աղքատացել է։ Այս կենդանիներով  
առանձնապես աղքատացել է Միության յեվրո-  
պական մասը, ուր հին ժամանակներում ջրշուն-  
ներ ու սամույրներ եյին պահում։ Այժմ թե  
մեկ և թե՛ մյուս կենդանին գրեթե բացառա-  
պես Միության ասիական մասումն են պահպում \*։  
Ընդհանրապես պետք ե ասել, վոր այժմ ամ-  
բողջ աղվամորթի (մուշտակենու) գրեթե  $90^{\circ}/_0$ -ը  
Միության ասիական մասն ե տալիս։

Այսուամենայնիվ Խ. Ս. Հ. Մ.-ը մուշտա-  
կաբեր կենդանիների հարստությամբ դեռ այժմ  
ել աշխարհում առաջին տեղն ե բռնում։  
Մուշտակի արհեստի ամենակարևոր աղբյուրն  
սկսուն ե։ Ապա գալիս են նապաստակները,  
ժանտաքիսի (խօրեկ) ցեղերը (ժանտաքիս, կնզում-  
սպիտակ կզաքիս — горностай), կզաքիս — կոնица),  
աղվեսների ցեղերը (աղվես, պեսեց), սամույրը և

\* Ջրշունների սակավաբժեք ցեղը Պալեսյեյում  
դեռ այժմ ել ե պատահում,

մյուսները։ Գազանորսությունը գլխավորապես այլազգիների ձեռքին եղանվում։ Միության յեղբողական մասում գլխավորապես զիրյանների, Սիբիրում՝ տունգուսների, յակուտների, կամչադալների և այլն։

Խ. Ս. Հ. Մ. ում վորսորդության ամենագլխավոր շրջանը Սիբիրն է։ Այստեղ, արտադրության գումարով, առաջին տեղը նույնպես սկյուռն է բոնում, բայց, դրանից զատ, այս շրջանն ամենաարժեքավոր աղվամորթ կենդանիների՝ սամոյրների, ջրշունների յեվ ծովի կատուների գլխավոր մատակարարողն է։ Սամոյրները գլխավորապես Արևելյան Սիբիրումն են պահվում (նրանցով հոչակվում են Բարգուզի շրջանը), Ջրշունները՝ գլխավորապես կամչատկայում, կատուները՝ կամչատկայի շրջանի կղզիներում, մանավանդ կոմանդորի (վրը, սակայն, նախքան 1914 թվականի պատերազմը, մենք դիշել ենք յապոնացիներին)։

Սակայն հիշյալ արժեքավոր կենդանիներն ավազակորեն վոչնչացվելու պատճառով նույնիսկ Սիբիրում ել սկսում են քանակապես պակասել։ Այնուամենայնիվ, աշխարհի ամենագլխավոր կենտրոններն առավելապես արժեքավոր մորթիներ հասցնելով, Խ. Ս. Հ. Մ.-ն միշազգային շուկայում պատվավոր տեղ երնում։

Մեր մորթիները գաղանորսների ձեռքից մի շաբք գնորդների միջոցով եյին հասնում Նիմնինովգորոդի տոնավաճառ (յարմարկա), մանավանդիրըիտի տոնավաճառ, ուր այդ մորթիները խոշոր պարտիաներով ոտարերկրացի կապիտալիստների գործակալներն եյին գնում, վորոնք գնած մուշտակացուներն ուղարկում եյին Արևմբտյան Յեվրոպայի կենտրոնները, գլխավորապես Լայպցիգ, վորն աշխարհում մորթեգործ ընտիր գործարաններով և հոչակված։ Այստեղ ոռւսական մորթիները ինսամքով մշակվում եյին, ներկվում և այլն, ու հետո նրանցից շատերը, իբրև արժեքավոր մորթեղեն արտադրություններ՝ մուշտակացու, ոռտոնդացու, ոճիքացու մորթեղեններ, իբրև բոհերներ, պալանտիններ և այլն, կը կին վերադառնում եյին Ռուսաստան։ Հետեանքում, թեկուղ վորքան ել տարորինակթվա, Ռուսաստանի այս խոշորագույն արհեստնանգամ, ինչպես և ձկնորսականը, արտաքին առևտրի մեջ մեզ պասսիվ հաշվեկշիվ եր տալիս։ Այսպես, 1901—1910 թվականների ընթացքում մենք տարեկան միջին թվով 41 միլիոն ռուբլու մուշտակացու ապրանքներ եյինք արտահանում, իսկ ներմուծվում եր 59 միլիոն ռուբլու։ Այս բացատրվում ե առաջինը՝ նրանով, վոր մենք նրանց շենք կարողանում մշակել այնպես, ինչ-

պես Հայպցիզի գործարաններն են մշակում, և  
ապրանքը հում դրության մեջ եյինք արտահա-  
նում, հետեազես ավելի եժան գնով, քան բե-  
րում եյինք. յերկրորդը՝ վոր գազանորսության ու  
զանազան մթերքները (մարալի յեղջուրները և  
այլն) մաքսանենգորեն են արտահանվում Զի-  
նաստան, Ամերիկա և այլ յերկրներ։ Բացի այդ,  
արտահանվող մուշտակացուների մեջ մենք շատ  
բան եյինք կորցնում հենց նույն պատճառնե-  
րով, վորոնք մեջ բերինք մեր հացի, վուշի,  
ձվի արտահանության մասին խոսելիս և այլն,  
այսինքն՝ նրա համար, վոր մեր մուշտակացու  
մորթին անաղարտ ընտրությամբ գովական չեր.  
Լավ մորթիների մեջ ամեն մի քայլափոխում  
ցած տեսակի կամ փչացած մորթիներ եյին պա-  
տահում, վորոնք արտասահմանյան շուկայում  
մեր մուշտակացուների արժեքն զգալի չափով  
գցում եյին։

Այժմ, արտաքին առետրի պետականացու-  
մով, այլազգիներին գնորդների պայմանագրերից  
(դարականերից) ազատագրելով ու վերջիններին  
կոռպերացիայի խոշոր մասնակցությամբ փոխա-  
րինելով, պետք ե յենթադրել, վոր աղվամորթե-  
րի մեր տնտեսությունը նշած պակասություն-  
ներից քիչ-քիչ կազատվի։ Աղվամորթերի տնտե-  
սության նոր պայմանների նպաստավոր հետե-

վանքները մենք արդեն տեսնում ենք. անցնելով  
արտաքին առևտրի գործակալների ու կոռպերա-  
տիվ միությունների վերահսկողության ներքո և  
լինելով ավելի խնամքով ընտրված ու առանց  
փշացածների խառնուրդի, վոր այնքան հաճախ  
եյին պատահումնախապատերազմյան արջանում,  
միջազգային շուկայում մեր մորթիներն սկսեցին  
առանձին ուշադրություն ու պահանջ վայելել:

Վերջապես, յեզրափակելու համար միքանի  
խոսք ել Խ. Ա. Հ. Մ.-ի ծովային կենդանիների՝  
ծովահորթերի (тиоленъ), ծովացուլերի (морж) և  
այլ հարստությունների մասին պետք ե ասենք:  
Ծովակատուների մասին մենք վերեսում ենք խո-  
սել: Սակայն, ինչպես յերեսում ե ստորև բերած  
աղյուսակից, ծովային գաղանորսության մեջ  
մենք ոտարերկրացիներից շատ ենք յետ մնում:

Ծովային կենդանիների վորսը 1913 թ.

(միլիոն ռուբլիներով)

Անգլիա	.	.	.	.	4,0
Գերմանիա	.	.	.	.	4,3
Ֆրանսիա	.	.	.	.	5,0
Ռուսաստան	.	.	.	.	0,5

Ռուսական ջրերի գոտում ոտարերկրացի-  
երն ավելի շատ եյին կենդանիներ (ինչպես և  
ծովի ձւով) վորսում, քան մենք, Սառուցյալ ով-

կիանոսից (Խ. Ա. Հ. Մ.-ի յեվրոպական մասում) անգլիացիք ու նորվեգացիք, իսկ հեռավոր Արեվելքում՝ յապոնացիներն ու ամերիկացիները։ Ծովային կենդանիների վորսը մեզնում ամենաաչքի ընկնող չափեր կասպից ծովում ունի, ուր տարեկան (մինչև 1914 թ. պատերազմը)  $350-400$  հազար ռուբլու գումարի ծովահորթեր եյին վորսվում (մինչդեռ հյուսիսում ծովային կենդանիների ամբողջ վորսը միայն  $120-150$  հազար ռուբ. յեր գնահատվում)։ Այնուամենայնիվ, Խ. Ա. Հ. Մ.-ի հյուսիսային և արևելյան մեր ծայրամասերը ծովային կենդանիներով շատ են հարուստ և, գործը պատշաճ հիմքերի վրա դնելուց, մեծ յեկամուտներ կարող եյին տալ։

---

II

**Խ. Ա. Հ. Մ. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ  
ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

**ԱԶՆԻՎ ՄԵՏԱՂՆԵՐԸ.**

Վոսկի: 1914 թ. պատերազմից առաջ վոսկի արդյունահանող կարեռագույն յերկըները հետևյալ կարգով եյին դասավորվում. —


Վոսկու արդյունահանությունը զանազան յերկներում (մինչեւ 1914 թ. պատերազմը, հազար փրեցով).  
(մինչեւ 1914 թ. պատերազմը, հազար փրեցով).

16.



ԱՅ


7



5.



$3\frac{1}{2}$ .



Տրանսվաալ Հ. Ա. Մ. Նան. Ավատրալիա Ռուսաստան  
№ 10.

Արդյունահանվող վոսկու քանակով Ռուսաստանը նախապատերազմյան շրջանում աշխարհում չորրորդ տեղն էր բռնում. Արդյունահան-

վող ամբողջ վոսկու զգալի մասը Սիրիոին ե ընկնում (զրեթե  $\frac{3}{4}$ -ը), իսկ Ուրալին միայն  $\frac{1}{4}$ -ը՝ Վերջինում գլխավորապես արդյունահանվում ե այսպես կոչված յերակավոր վոսկին (վորը համաձուլված ե կարծր տեսակների, որինակ՝ կվարցի և այլ հանքերի ու մետաղների հետ), իսկ Սիրիում՝ գլխավորապես ավազուկի, վորը Լենայի և Ամուրի վտակների վոսկերեր ավազների միջից ե ջոկվում։ Հազվագեղ պատահում ե ինքնածին ձեռվ։ Մուսաստանում ամենախոշոր ինքնածինն Ուրալումն ե գտնված յեղել և 88 ֆունտ ե քաշել, բայց արտասահմանում ավելի ևս խոշոր ինքնածիններ են գտնված յեղել (ամենախոշոր ինքնածին վոսկին Ավստրալիայումն ե գտնված յեղել և 248 ֆունտ ե քաշել)։

Մուսաստանում արդյունահանված վոսկու մեծ մասը վոսկու ավազին եր ընկնում (վորն ամբողջ արդյունահանված վոսկու զրեթե  $\frac{2}{3}$ -ն եր)։ Սիրիում արդյունահանված վոսկու զրեթե կեսն ստացվում եր տնայնագործ-վոսկե խույզների միջոցով, վորոնք վոսկու ձեռնալվացումով եյին պարապում։ Այսպես ասած, վոսկու ավազակային արտադրության միջոցի հետեւանքով վոսկին իզուր շատ եր կորչում։ Բացի այդ, Սիրիում արդյունահանված վոսկու մի մասը մաքսանենգությամբ արտասահման եր գնում,

այնպես վոր Ռուսաստանում վոսկու արդյունահանությունն իրականում միքիչ բարձր է յեղել:

Խ. Ա. Հ. Մ.-ն իր հանած հարստությունների կողմից ընդհանրապես, դեռ բավարար չափով հետազոտված չե և, անկասկած, նրա խորքերն իրենց մեջ ամեն տեսակի հանքանյութերի ու մետաղների, սրանց թվում և վոսկու, ահագին պաշարներ են թագցնում։ Համենայն դեպս, վերջինի շերտավորումներ (залегания) հայտնաբերված են Խ. Ա. Հ. Մ.-ի ամենատարբեր վայրերում և նույնիսկ բնեուային շրջանի սահմաններից դուրս։

Հեղափոխության ու քաղաքացիական կոիվների ընթացքում մեզնում վոսկու արտադրությունը սաստիկ ընկավ, 1921 թվականին հասնելով միչև 84 փթի (այսինքն նախապատրազմյան շրջանի  $3^0/0$ -ից պակաս), բայց հետո սկսեց արագ կերպով վերականգնել. 1922 գործառնական տարում\* նրանից 278 փութ ե արդյունահանված, իսկ 1923 թ.՝ արդեն 473 փութ \*\*։

\* Գործառնական տարին, վորն այժմ ընդունված ե պետական բոլոր արդյունաբերության մեջ, հաշվում ե նախընթաց տարվա հոկտեմբերի 1-ից մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը։

\*\* 1924 թ. վոսկու արդյունահանության մասին տուայժմ տեղեկություններ չկան։

Պլատին։ Պլատինը բոլոր ազնիվ մետաղներից ամենաարժեքավորն է. Նրա փութը մոտ 25 հազար ռուբլի յե գնահատվում (մինչդեռ վոսկու փութը 21 հազար ռուբլի արժե), վորը բացատըրվում ե ինչպես նրա չնչին արդյունահանությունով, այնպես ել նրա բացառիկ վորակներով՝ ամենամեծ տեսակաբար կշռով ու խիստ դժվարահալությամբ։ Այս մետաղից թորանոթներ, կաթսաներ, թասեր ու լաբորատորային այլ ամանեղեններ են պատրաստում։ Վերջին հանգամանքը նրան անփոխարինելի յե դարձրել բացի դրանից, ելեկտրո-ավիո-ռադիո-տեխնիկայի մեջ պլատինը միանգամայն կարևոր նյութ ե հանդիսանում։

Պլատինի հարստությամբ (մինչեւ պլատերագմը), Ռուսաստանն աշխարհում առաջին տեղն եր բռնում, մատակարարելով միջազգային շուկայում շրջանառության մեջ գտնվող ամբողջ պլատինի  $95^0/_{0}$ -ը, ձիւտ ե, պլատինի շատ թե քիչ աչքի ընկնող հանքատեղերը Ռուսաստանում եյին գտնվում։

Սովորաբար պլատինը մանր ինքնածինների ձևով (հատիկներով, բյուրեղներով կամ կլոր մեծ կտորներով) ե հանդիպում։

Յերբեմն գտնված պլատիններից ամենամեծը  $23^1/_{2}$  ֆունտ ե քաշել։ Պլատինը բացառա-

պես Ուրալում ե արդյունահանվում: 1903 – 1913

թ. թ. ընթացքում պլատինի արդյունահանությունը տարեկան միջին թվով 360 գ. եր լինում:

Պատերազմի ու հեղափոխության ժամանակ պլատինի արդյունահանությունն սկսեց արագ կերպով ընկնել: Այսպես, 1921 թվին նրանից ընդամենը 12 փութ ե արդյունահանված, բայց 1922 գործառնական տարում արդեն 42 փութ, իսկ 1923-ին՝ 72 փութ ե արդյունահանվել\*.

Սակայն պատերազմի ժամանակ անդրովկայանյան յերկրներում, մանավանդ՝ Կոլումբիայում, Միացյալ Նահանգներում և Ավստրալիայում, մենք պլատինի արդյունահանության անսպասելի բարձրացումն ենք նկատում: Այսպես, 1917 թ. Կոլումբիայում՝ 60 փթից ավելի պլատին ե արդյունահանված յեղել: Սակայն վերջին ժամանակներս Խ. Ս. Ռ.. ի միքանի վայրերում մենք պլատինի հանքատեղեր ելի յենք գտել: Պլատինի առանձնապես խոշոր հանքատեղերն Ուրալի Ալապայկի շրջանում են գտնված (ուր մինչև այժմ պլատին չեյին գտել), իսկ հետո, մոտ անցյալում, բևեռային շրջանից հեռու (Յենիսեյի գետաբերանում) հսկայական քանակությամբ պլատինի շերտեր են գտնված:

\* 1924 գործառնական տարվա համար դեռ տեղեկություններ չկան:

Արծաթ: Խ. Ս. Հ. Մ.-ն, ըստ յերկութին,  
այս մետաղով առանձնապես հարուստ չի: Հա-  
մենայն դեպո, նախապատերազմյան Ռուսա-  
տանում արծաթի արդյունահանությունը հազար  
ֆթից ել չեր անցնում և միջին թվով տարե-  
կան մոտ 600 գութ եր լինում (միայն 1915  
թվին ե 1,100 գութ արծաթ արդյունահանվել),

Արծաթի արդյունահանությունը զանազան յերկրներում  
(մինչեւ 1914 թ. պատերազմը, հազար գրետով):

**ՄԵՔՍԻԿԱ**

140

**ՄԻԱՅ.ՆԱԶԱԽՆԳՆ**

110

**ԿԱՆԱԴԱ**

60

**ԱՎՍՏՐԱԼԻԱ**

40

**ԳԵՐՄԱՆԻԱ**

10

**ԻՍՊԱՆԻԱ**

8

**ՌԻՒՍԻԱՆՏԱՆ**

9

Nº 11.

մինչդեռ, ինչպես յերկում ե դիագրամմայից,  
ուրիշ յերկրներում արծաթն ավելի շատ եր ար-  
դյունահանվում, քան Ռուսատանում:


## ՅԵՐԿԱԹ.

Մարդկության համար յերկաթի ունեցած  
նշանակության մասին մենք յերկար խոսելու չենք:

Բավական են նշել այն, վոր այժմ յերկաթից  
վոչ միայն պատրաստում են մարդու համար ան-  
հրաժեշտ արտադրության գործիքներ՝ մեքենա-  
ներ, շոգեքայշեր, կամուրջներ, այլև նըանից շի-  
նում են նավերի իրաններ (կորպուսներ) ու նույն-  
իսկ շենքերի կմախքներ, և վորքան վոր յեր-  
կրում յերկաթի շնչագլուխ գործածությունն ե-


Թուղի հայվածքը ամենազլիսավոր յերկրներում  
մինչեւ 1914 թ. պատերազմը  
(միլիոն ֆրեցով).

1/00



Հ.Ա.ԾԻԱՑ.ՆԱՀ.

560



ԳԵՐՄԱՆԻԱՀԻՆՄ

295



ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

259



ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

252



ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

№ 12.

բարձր լինում, այնքան ել նրա մեջ արդյունա-  
բերական վիճակն երաբձր լինում, ընդհանրա-

պես բարձր ելինում ամբողջ կուլտուրան Դրա  
համար ել յերկաթի մեծ պաշար ունեցող զրեթե  
բոլոր յերկրներում (Հ. Ա. Միացյալ Նահանգ-  
ներ, Անգլիա, Բելգիա և այլն) մենք նաև առա-  
վել բարեկեցիկ վիճակ ենք նկատում \*:

Խ. Ա. Հ. Մ.-ում յերկաթի հանքը տարբեր  
վայրերում ել արդյունահանվում, բայց հանքի  
գլխավոր քանակը մենք ստանում ենք՝ 1) Խ. Ա.  
Հ. Մ.-ի հարավից, առանձնապես Կրիվոյ Ռոգից,  
վորը տալիս ել Խ. Ա. Հ. Մ.-ում արդյունահան-  
վող անբողջ թուջի  $70^{\circ}/_0$ , 2) Ուրալից (Բլագո-  
դատ, Բարձր և Մագնիսի լեռներից) և 3) Մերձ-  
ոսկովյան շրջանից (Տուլայի, Կալուգայի, Ռյա-  
զանի և այլն նահանգներ):

\* Յերկաթի անդյունահանության թվական տըվ-  
յալները մենք հարմարեցնում ենք թուջին—իբրև սկզբ-  
նական մթերքի, վորը յերկաթի հանքից ել ստացված  
(հանքագործական գործարաններում հատուկ հնոց-հա-  
լոցներում):

Հանքագործության արտադրության ամբողջ պրո-  
ցեսուր բաժանվում ել յերեք հաջորդական շրջանի՝ առա-  
ջինը—հալոցային արտադրությունը՝ սկզբնական  
մթերք—թուջ հալելուն ե ծառայում, յերկրորդը—մար-  
տենովյան արտադրությունը՝ հատուկ «մարտենովյան  
հնոցներում» թուջից յերկաթ և զանազան տեսակի պող-  
պատ հալելուն ե ծառայում և, վերջապես, յերրորդը՝  
այսպես կոչված գլարան, այսինքն՝ կիսաֆարբիկատ-  
ներ՝ յերկաթաթիթեղ, ջոկովի (сортовое), տանիքա-  
թիթեղ, ռելս, բանդաժ և այլն:

Բացի նշած հանքատեղերից, յերկաթի հանքեր կերչի մոտ, Կովկասում, Թուրքեստանում և Սիբիրում ել են արդյունահանվում, բայց համեմատաբար չնշին քանակությամբ՝ հաղորդակցության ճանապարհների բացակայության պատճեռով։

Անհրաժեշտ են նշել, վոր հեղափոխական վերջին ժամանակի ընթացքում յերկրաբանական հետազոտությունները նոր հանքատեղեր են հայտնաբերել, վորոնք յերկաթի հսկայական պաշար ունեն, ինչպես, որինակ՝ Տուրուսկի, Կանդալակշի և Պուդոժի հանքատեղերը. Կոլա թերակղզու յերկաթի հանքերը, վորոնք վորակի կողմից շվեդական հանքից յետ չեն մնում. Կերչի թերակղզու յերկաթի հանքերի նոր անագին շերտերը, վորոնք ավելի քան յերեք անգամ գերազանցում են Կրիվորոգի հանքերին (թեև, ձիշտե, վոչ այնքան բարձր վորակի, ինչպես Կրիվորոգինն են) և այլն։

Բայց առանձնապես կարեոր ու զարմանալի գյուտը Կուրսկի մազնիտի անոմալիայի շրջանում մագնիտի ու կարմիր յերկաթահանքի շերտերի հսկայական շերտեր (залежи) հայտնաբերելն եւ Գետինը փորելով՝ մոտ 100 սաժեն խորության վրա, իսկապես, գտել են յերկաթահանքեր, վորոնք Կրիվորոգի հանքերին են նման։

Մասնագետների հաշվով, կուրսելի շրջանի հանքային հարստությունները հսկայական են և գերազանցում են համաշխարհային բոլոր պաշտամները, միասին վերցրած։ Կուրսելի մազնիտի անոմալիայի հանքերում հետազոտությունները շարունակվում են։

Վերջին հայտնաբերումների հետևանքով Խ. Ս. Հ. Ա. ին յերկաթահանքերի հարստությամբ, անկասկած, աշխարհում առաջին տեղն ե պատկանում։

Չնայած յերկաթահանքերի հարստության, մենք ելի հենց զգալի քանակությամբ թուջը, յերկաթն ու պողպատը (մինչև 47 միլիոն փութ) արտասահմանումն ելինք սլատվիրում։ Սակայն արտասահմանյան թուջի (և լեռնային արդյունաբերության միքանի այլ մթերքների) մեզ մոտ բերելն ամենից շատ տրանսպորտի շահերի պատճառաբանություններով ե բացատրվում։ այսպես, Լենինգրադին, Մերձբայտան յերկրին ու Լեհաստանի թագավորությանը ձեռնտու յեր թուջն ու այլ հանքերն արտասահմանում պատվիրել, քան ստանալ Մուսաստանի հարավից կամ Ուրալից, վորտեղից գործադրության հիշյալ կենտրոններ փոխադրելը մետաղի ինքնարժեքն ավելացնում եր մինչև այն չափերի, վորոնք գերազանցում ելին արտասահմանյան մետաղի արժեքին, նույնիսկ մաքոի հետ մեկտեղ։

Պատերազմի ու հեղափոխության ընթացքում Խ. Ս. Հ. Մ.-ի ժողովրդական սնտեսության մեջ մի ճյուղ այնպես չընկավ, ինչպես թշտանալությունը (յերկաթի և պողպատի): Այս բացառվում են նրանով, վոր Խ. Ս. Հ. Մ.-ի մետաղագործական գլխավոր շրջաններ՝ Ուրալն ու Հարավը յերկար ժամանակ պատերազմների գոտումն ելին գտնվում: Որինակ՝ 1919 թվին վոչ մի հնոց-հուլոց չեր աշխատում: 1921 թվին միայն 7 միլիոն փութ թուջ են հալված (1913 թ. 257 միլիոն փթի դիմաց), այսինքն՝ նախապատերազմյան մշակության  $2^0/0$ -ը: 1922 գործառնական տարում 10 միլիոն փութ թուջ են հալված 1923 գործառնական տարում՝ 18 միլ., իսկ 1924 գործառնական տարում՝ արդեն 42 միլիոն փութ:

### ՊՂԻՆՉ.

Պղնձի արդյունահանությամբ Ռուսաստանը նախապատերազմյան շրջանում նույնպես ավելի քան համեստ տեղ եր բռնում: Ստորև բերած դիագրամման ցույց են տալիս պղնձով առավել հարուստ յերկրների պղնձի արդյունահանությունը և, այս մետաղի արդյունահանությամբ միջազգային շուկայում Ռուսաստանի գրաված տեղը:

Խ. Ս. Հ. Մ.-ի պղնձն արդյունահանվում է Ուրալում, Ալտայում և Կիրգիզիայում: Իսկ այս-տեղից զատ, պղնձով հարուստ հանքատեղեր

Խ. Ա. Հ. Մ. ի., Արևմտյան Յեվրոպայի, Արևելյան  
Սիբիրի և Հեռավոր Արևելքի մյուս վայրերում  
ել կան, բայց այս հանքատեղերը գրեթե մշակ-  
ված չեն։ Չնայած վոր նախապատերազմյան

Պղնձի արդյունահանութ. ամենազլիավոր յերկրներում  
(1913 թվին, միջին փրեռով).

Միաց. Նահանգներ	33,8
Յապոնիա	4,5
Ապանիա և Պուտ.	3,3
Մեքսիկա	3,2
Ավստրալիա	2,9
Չիլի	2,4
Կանադա	2,1
Շուստաստան	2,1
Գերմանիա	1,9
Պերու	1,6
Շվեդիա և Նորվեգիա	0,9

№ 13 (առ. եջ 99).

շրջանում պղնձի արդյունահանությունն արագ  
կերպով եր աճում (1905 թ. նրա արտադրու-  
թյան 519 հազար վութը 1913 թ. մինչև 2048  
հազար վթի բարձրացավ, այսինքն, գրեթե քա-  
ռապատկվեց), մենք մեր սեփական պղնձով ա-  
մենեին ել չեցինք բավարարվում ու վերջնի  
դդալի մասը արտասահմանում եյինք պատվի-

բում։ Բայց ի նկատի ունենալով, վոր արտասահմանյան պղնձի ներմուծումը զնալով նվազում եր (վորը 1914 թ. 1.240 հազար փթից 1913 թվին կրճատվել եր մինչև 374 հազար փթի), կարելի յեր յենթադրել, վոր նորմալ հանգամանքներում սենք արտասահմանյան ներմուծումից շուտով կազատվելինք և Խ. Ս. Հ.-ի ստորերկրյա պարապ պաշարներով այս մետաղի պահանջները միանգամայն կը ավարելինք։ Պղնձի արդյունահանությունն առանձնապես պատերազմի ու հեղափոխության ժամանակ ընկավ։

1917-ից մինչև 1921 թ. թ. պղինձը բոլորովին չեր ել մշակվում, 1922 գործառնական տարում նրանից միայն 57 հազար փութ ե ստացված (նախապատերազմյան մշակության  $3^0/_0$ ), 1923 գործառնական տարում՝ 100 հազար փութ ( $5^0/_0$ ), իսկ 1924 թվականին՝ ընդամենը 177 հազար փութ։

### ՔԱՐԱԾՈՒՅ.


Ինչպես տեսնում ենք № 14 դիագրամմայից, քարածխի արդյունահանությամբ նախապատերազմյան Ռուսաստանը վեցերորդ տեղն եր բռնում։

Սակայն քարածխի բնական պաշարներով, վորոնք հողի տակ են գտնվում, Խ. Ս. Հ.. ն,

համաձայն նոր հաշվումների, աշխարհում չոր-  
րորդ տեղն է բռնում, յետ մնալով միայն Հյու-  
սիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից,  
Կանադայից ու Չինաստանից:

Քարածխի արդյունահանությունը ամենազլիսկոր  
լեռկրներում  
(1913 թ., միլիոն փրեռով).

Միաց. Նահանգն



Անգլիա



Գերմանիա



Սախ. Ավստրի  
-առևնջարիա



Ֆրանսիա



Գրեատան



№ 14 (տ. եջ 101).

Քարածխի համաշխարհային պաշարները  
(Մինչև 200 մետր խորությամբ)

Հ. Ա. Միաց. Նահանգ. 3,839 միլիարդ տոնն.  
Կանադա . . . . . 1,236 » »

\* Տոննը — մոտ 61 փութ է:

Խ. Ա. Հ. Մ. ում արդյունահանվող ածխի  
ճնշող մեծամասնությունը (*մոտ  $\frac{3}{4}$  լ*) Դոնի  
ավագանին ե ընկնում, իսկ մնացածը՝ Ուրալին,  
Մերձ-Մուկովյան շրջանին և Արևմտյան ու  
Արևելյան Սիբիրին:

Դոնի ավագանը, վորը մեզ քարածխի մեծ  
մասն ե հասցնում, մինչև վերջին ժամանակ,  
ըստ կարողության, քարածխի հանքատեղի առա-  
ջին վայրն եր համարվում (Դոնի ավագանի քա-  
րածխի պաշարները 58 միլիարդ փութ են հաշ-  
վում): Սակայն, ըստ նորանոր հետազոտություն-  
ների, կոտարված հեղափոխական մեր ժամա-  
նակներում, Խ. Ա. Հ. Մ. ի տերրիտորիայում  
կա յերկու հանք, վորոնք քարածխի պարագ  
շերտերի կարողությամբ զգալի կերպով գե-  
րազանցում են Դոնի ավագանին. դրանք են՝  
առաջինն իրկուտսկի նահանգի Չերեմխովյի ավա-  
գանը, վորի պաշարները 150 միլիարդ տոնն են  
հաշվում, և առանձնապես Կուզնեցկի ավագանը  
(Տոմսկի նահանգում), վորի պաշարները 474  
միլիարդ տոնն են վորոշված:

Քարածխի այնպիսի զգալի գործածություն,  
ինչպիսին մենք արդյունաբերական յերկրներում  
ենք նկատում, Ռուսաստանում չի յեղել. մինչ-

դեռ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1 բնակչին (1914 թ. պատերազմից առաջ) տարեկան 328 փութ գործադրվող քարածուխ եր ընկնում, Գերմանիայում՝ 254, Ռուսաստանում միայն 13 փութ եր:

Սակայն մեզնում քարածխի այսքան նվազ գործածությունը վոչ միայն մեր արդյունաբերության ու տրանսպորտի հետամսացությամբ երացատրվում, այլև նրանով, վոր յերկրի վառելանյութի մատակարարման միայն կեսն ե քարածխին ընկնում, իսկ մյուս կեսը՝ վառելափայտին և մասամբ ել նավթին ու տորֆին ե ընկնում:

Այնուամենայնիվ Ռուսաստանում, ոկտած XIX-րդ դարի վերջերից, քարածխի արտադրությունն ու գործածությունն սկսել եր անսովոր արագությամբ աճել և մեզնում, քարածխի արտադրության (և գործածության) թափով (այնպես, ինչպես թղթ ու պղնձի արդյունահանության), մենք նույնիսկ մեծ պետություններից անցել ենք. այսպես, 1914 թ. պատերազմին նախորդող 25 տարվա ընթացքում քարածխի արդյունահանությունն Անգլիայում մեկ ու կես անգամով եր աճել, Գերմանիայում՝ յերեք անգամով, Հյուս. Ամերիկայի Միաց. Նահանգներում՝ չորս անգամով, իսկ Ռուսաստանում՝ վեց անգամով\*:

\* Ռ. Արսկի «Հանքային վառելանյութերը. 1920 թ.

Սակայն վառելանյութի պահանջը մենք սեփական քարածխով լրիվ չեյինք բավարում ու վերջնի զգալի մասը (մոտ  $\frac{1}{2}$  միլիարդ ֆութ արտասահմանից եյինք բերում։ Բայց և այնպես, պետք ե ասել, վոր արտասահմանյան քարածուխ բերելը վոչ միայն մենակ մեր արտադրության անբավարարությամբ, այլև հետեւյալ յերկու հանգամանքներով եր թելադրվում։ առաջինը՝ տրանսպորտի շահերով (վորի մասին մենք արդեն խոսել ենք արտասահմանյան թղի ու պղնձի մեզ մոտ բերելը հիշատակելիս), և, յերկրորդը՝ քարածուխ բերելու զգալիությամբ (վորը բեռան դատարկել և նորից բարձելը և, ընդհանուրապես, 500 վերստից ավելի տարածություն փոխադրելը թույլ չի տալիս):

Այնուամենայնիվ քարածխի չնչին արտադրությունը մեր արդյունաբերությանը միշտ ել սպառնալիք ե յեղել (մանավանդ ներկա հեղափոխական ժամանակներում) և բացատրվում ե ինչպես մեր քարածխի հանքերի վորակյալ բանվորների պակասով, այնպես ել ածուխ արդյունահանելու մեր միջոցների հետամնացությունով։ Այսպես, Խ. Ա. Հ. Մ. ում բանվորների տարեկան միջին արտադրողականությունը 9500 ֆութ քարածուխ ե տալիս, Գերմանիայում՝ 15.000, Անգլիայում՝ 16,500, իսկ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 42,600 ֆութ։

Ամերիկական բանվորների քարձր արտադրությանությունը հետևանք է այն բանի, վոր Միացյալ Նահանգներում քարածխի գործը լայն կերպով է մեքենայացըած (ելեկտրիֆիկացիայի յենթարկված):

Հնդսմին անհրաժեշտ է միանգամ ևս նշել, վոր քարածխի վհչ մշակվող շերտերից բոլորը միանման արժանիքներով աշքի չեն ընկնում: Մինչդեռ Դոնի ավազանը բարձր արժեքի հրաշալի կերպով կոկսացող ածուխներ, ինչպես և ամենաբարձր տեսակի ածխի—անտրացիտի ( $95^0/0$  ածխածնի պարունակությամբ) ահագին պաշարներ ունի, Ուրալն, որինակ, ունի քարածուխ՝ միացած ծծմբի հետ, վորը հանքագործական արդյունաբերության համար վերջինին անպետք է դարձընում: Մերձ-Մուկովյան շրջանը մեզ տալիս է այսպես կոչված կինամոնագույն ածուխներ (մինչև  $70^0/0$  ածխածնի պարունակությամբ), վորոնք կոկսացման համար անպետք են:

Ճիշտ ե, Խ. Ս. Մ. ուսմ կան այնպիսի շրջաններ, վորոնք կոկսացող ածուխների հարուստ շերտեր ունեն, որինակ՝ կուղնեցկի ավազանը, բայց, հաղորդակցության ճանապարհների բացակայության հետևանքով, այս վերջինն առաջմ լուրջ տնտեսական նշանակություն չունի: Հրաշալի կերպով կոկսացող ածուխների հարըս-

տռթյանով աչքի յե ընկնում նաև Սախալին  
կղզին:

Սակայն, չկոկսացող քարածուխները, ինչ-  
պես և կինամոնագույն ածուխներն անպետք լի-  
նելով հանքագործության համար միայն, հրաշալի  
վառելանյութ են արդյունաբերության մյուս բո-  
լոր ճյուղերի ու տրանսպորտի համար, ուստի  
և. Ա. Հ. Մ. ի քարածխի բոլոր տեսակի հան-  
քերի լայն մշակությունը մեր ամբողջ արդյու-  
նաբերության ու տրանսպորտի համար հսկայա-  
կան նշանակություն ունի: Սկսած հիշյալ հան-  
քատեղերից և վերջացրած բեեռային շրջանից  
շատ հեռու՝ Յենիսեյի գնտաբերանում (Կարիլի  
ածուխ), Նոր Յերկրում և այլն միանգամայն հայտ-  
նաբերած վերջինի բազմաթիվ շերտերով, Խ.  
Ա. Հ. Մ. Ն իր բոլոր հանքերում քարածխի ան-  
սպառելի շերտեր ունի:

Իբրև ածխի բնական բաղա այն նավերի,  
վորոնք ապագայում ճանապարհորդելու յեն այժմ  
հերթի կանգնած Հյուսիսի Մեծ ճանապարհով  
(Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ամբողջ  
ափերի յերկարությամբ) Կարիլի ածուխը նույն-  
իսկ համարշահային նշանակություն կարող ե  
ստանալ:

Պատերազմի ու հեղափոխության ժամանակ,  
ինչպես և քաղաքացիական կոհիմերի շրջանում,

Խ. Ա. Հ. Մ.-ում քարածխի գործը սաստիկ ընկավ, վորովհետև քարածխի մեր ամենազբլիսավոր շրջանները (Դոնի ավազանն ու Ռուսական այդ իսկ կոփմաների գոտում եյին գտնվում։ Քարածխի 1913 թվականի 1688 միլիոն փութքանակությամբ արդյունահանությունը (Խ. Ա. Հ. Մ.-ի սահմաններում) 1921 թվականին ընկավ մինչև 472 միլիոն փթի, այսինքն՝ մինչև նախապատերազմյան նորմայի  $28^0/_{\circ}$ -ի։ 1922 թվից աստիճանաբար բարձրացում ե սկսվում. 1922 գործառնական տարում մենք 588 միլիոն փութքարածուխ ենք արդյունահանել, 1923 գործառնական տարում՝ 658 միլիոն փութք, իսկ 1924 գործառնական տարում՝ 931 միլիոն փութք։

### ՆԱՎԹ.

Նավթի արդյունահանությամբ (տարեկան մոտ  $1/2$  միլիարդ փութք) նախապատերազմյան շրջանում Ռուսաստանը համաշխարհային տնտեսության մեջ պատվավոր տեղ եր գրավում, անմիջականորեն գալով Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների յետելից (վորոնք տարեկան մոտ 2 միլիարդ փութք եյին արտահանում)։

Նավթ բառի տակ հասկացվում ե այսպես կոչված քարյուղը, վորը հողի խորքերում ե հանդիպում ու առանձնահատուկ հոտով, գորշ կի-

Նամոնագույն հեղուկ եւ Նավթը գրեթե զուտ չի դործածվում, այլ մտնում է Նավթազտիչ դործարաններ, ուր նրանից ստացվում են՝ կերոսին, մենզին, քսելու յուղեր և ուրիշ շատ արժեքավոր Նավթի արդյունանակությունը զանազան յերկներում (1913 թվին, միլիոն փրեռով).

Հ.Ա.Միաց.Կահ.



1973

Ռուսաստան



565

Մեթանից




185

Ռումանիա




114

Հոլանդ.Նորկ.




94

Գալիցիա



66

Յապոնիա



61

№ 15 (առ. եջ 108).

մթերքներ՝ վազելին, պարաֆֆին, ներկող նյութեր, դեղանյութեր ու միքանի պարֆյումերային նյութեր և այլն։ Բացի այդ, տնտեսական խոշոր նշանակություն ունեն նավթի մնացորդներ՝ մազութը, վորը հրաշալի վառելանյութ եւ վերջինով բանում եյին կովկասի, կասպից և վոլգայի մեր ամբողջ նավատորմիղները, Խ. Ա.

Հ. Մ. ի միջանի յերկաթուղինեցն ու ռուսական շատ գործարաններ:

Խ. Ա. Հ. Մ. -ում նավթի  $\frac{3}{4}$ -ը Բագվի շրջանն ե տալիս, ապա գալիս են՝ մնացած Կովկասը (մանավանդ Գրոզնու շրջանը), Եմբենի շրջանը, Զելեկեն կղզին (Կասպից ծովում), Ֆերգանի շրջանն ու միքանի այլ հանքատեղեր: Մենք վոչ միայն յերկրի ներսում եյինք նավթ գործածում, այլ նույնիսկ արտահանում եյինք: Մինչև 1914 թվի պատերազմը, յերբ Ռուսաստանը նավթի արդյունահանությամբ աշխարհում առաջին տեղն եր բռնում, մենք տարեկան մոտ 100 միլիոն փութ նավթ եյինք արտահանում, բայց հետո, Բագվի նավթի հին տարածությունների սնանկության հետևանքով ու Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նավթի խոշոր ավելացումով, մեր արտադրությունն սկսեց ընկնել: Սակայն նույնիսկ մինչև մեծ պատերազմը մենք համաշխարհային շուկայում ելի հենց խոշոր նշանակություն ենք ունեցել. 1913 թվի նավթամթերքի մեր արտադրությունը մոտ 58 միլիոն փութ ե յեղել:

Անհրաժեշտ ե նշել, վոր պատերազմի ու հեղափոխության հետևանքներից նավթի արդյունաբերությունը համեմատաբար ավելի քիչ տուժեց, քան լեռնային արդյունաբերության մյուս

ճյուղերը՝ 1921 թ. Խ. Ա. Հ. Մ.-ի նավթի արդյունահանությունն իջավ մինչև 233 միլիոն փթի (1913 թվականի 561 միլիոն փթի դիմաց). 1922 թ. գործառնական տարում բարձրացավ մինչև 276 միլիոն փթի, 1923 թ.՝ մինչև 315 միլիոն, իսկ 1924 գործառնական տարում՝ մինչև 366 միլիոն փթի. Բայց պատերազմի ու ռուսական հեղափոխության ընթացքում մենք համաշխարհային տնտեսության մեջ ընդհանրապես, անգամ նավթի արդյունահանության լավացումն ենք նկատում. 1921 թ. Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում նավթի արդյունահանությունը գրեթե կրկնապատկվեց (1913 թ. դիմաց), իսկ Մեքսիկայում՝ 7—8 անգամով ավելացավ, վորը համաշխարհային տնտեսության մեջ Մեքսիկային յերկրորդ տեղը քաշեց, իսկ Խ. Ա. Հ. Մ.-ին իջեցրեց յերրորդ տեղը:

Սակայն նավթի տնտեսության ասպարիգում մենք յերկու կարևոր հանգամանք պետք ենկատի ունենանք:

Առաջինը, մենք պետք ենք նշենք՝ չնայած վոր վերջին ամբողջ ժամանակի ընթացքում գրեթե ամենուրեք նավթը խիստ պրոգրեսիվ կերպով ավելանում է (թերեւ բացառությամբ Ռումինիայի և Գալիցիայի), բայց այս գնահատելի վառելիքի համաշխարհային ոլաշարներն,

ընդհանուր առմամբ, այնքան ել մեծ չեն և, բացի  
այդ, անսովոր արագությամբ (ուրիշ հանածո-  
ների հանքատեղերի համեմատությամբ) նվա-  
զում են։ Այսպես, մասնագետների հաշվով նավ-  
թի հանքատեղերով աշխարհում ամենաարուստ  
Միացյալ Նահանգների նավթի պաշարը միայն  
10—15 տարի կը ավականացնի։

Յերկրորդը, շնորհիվ ավտոմոբիլի գործի,  
ավիացիայի ու ստորջրյա լողալու ամենուրեք  
մեծապես աճելուն, մենք պետք ենք նշենք բնու-  
զինի ամեն տեղ արագ կերպով աճող պահանջը։

Նշած յերկու հանգամանքը միասին վեր-  
ցըրած, մեծ պետությունների կառավարություն-  
ներին ու արդյունաբերական շրջաններին ստի-  
պում են ուրիշ յերկրներից նավթ ստանալու  
համար ամեն տեսակ (կոնցեսիոն և այլ) մի-  
ջոցներ վորոնել։ Այս կողմից Խ. Ս. Հ. Մ.-ի  
նավթի հարստություններն ամբողջ աշխարհի  
աչքն իրենց վրա յեն դարձրել, և շնորհիվ ոռու-  
սական նավթի արտահանության ուժեղ կերպով  
աճելուն, նավթի միջազգային շուկայում մեր  
նշանակությունն ավելի ու ավելի յե բարձրա-  
նում։ Այսպես, 1921 թ. մենք միայն 451 հա-  
զար փութ նավթ ենք արտահանել, 1922 թվին  
արդեն  $3\frac{1}{2}$  միլիոն, իսկ 1923 գործառնական տա-  
րում՝ զրեթե 20 միլիոն փութ։

Հիշյալ հանգամանքները մեզ ել նույնպես  
դրդում են մեր նավթի պաշարներն ամեն կերպ  
տնտեսելու և, ամենից առաջ, շոգեվառարաննե-  
րում (վորոնց մեջ եժանագին վառելանյութեր,  
որինակ՝ տորֆ, ցածր տեսակի ածուխներ կա-  
րող են գործածվել և այլն) նավթ բանեցնելն  
ամեն կերպ կրճատելու, այնպես վոր հնար լի-  
նի կամ ստացված ավելուրդներն արտահանել  
(մեր արտահանության հաշվեկշիռը բարելավելու<sup>1</sup>  
համար), կամ նրանցից արժեքավոր մթերքներ  
(բենզին, քսելու յուղեր, վագելին, պարաֆին և  
այլն) պատրաստելու համար գործադրել, կամ,  
ծայրահեղ դեպքում, այդ ավելուրդներն ամե-  
նաշատ տնտեսողական վառքի—ներքին վառքի  
մեջ (դիզելներում) բանեցնել։ Իսկ մեր նավթի  
հարստությունները տնտեսելու ամենալավ ճա-  
նապարհը ելեկտրիֆիկացիան է։

### ՏՈՐՖ.

Խ. Ա. Հ. Մ. Ա տորֆով այնքան հարուստ է,  
վորքան թերևս աշխարհում վոչ մի յերկիր։ Տոր-  
ֆի տնտեսական նշանակությունն առանձնապես  
աչքի ընկավ հեղափոխական շրջանում, յերբ մեր  
յերկիրը վառելանյութերի ճգնաժամով բռնված  
լինելու հետևանքով ընդհանրապես, և քաղաքա-  
ցիական կոիզմերի ժամանակ քարածխի մեր շըր-  
ջաններից կտրվածությամբ մասնավորապես,

անհրաժեշտությունն ստիպեց տորֆի վառելանյութի ուժեղ պատրաստության ձեռնարկել։ Տորֆի շերտերը մեզնում այնքան են հսկայական, վոր նրանց աճելը միմիայն Խ. Ա. Հ. Մ.-ի յեվրոպական մասում (նույնիսկ առանց հեռու հյուսիսի), փայտի, ածխի ու նավթի փոխարեն կարող եր բավականացնել Խ. Ա. Հ. Մ.-ի բնակչության վառելիքի ամբողջ կարիքը բավարարելուն։

Թեև տորֆի տնտեսության արտադրողականությունը բոլոր այլ տեսակի վառելանյութերից ցած է, բայց դրա փոխարեն, շնորհիվ եժանության, միանգամայն կարող եր փայտին, ածխին ու նավթին փոխարինել։

Վառելանյութի վերոհիշյալ ճգնաժամը տորֆի վառելանյութն առաջ բաշեց, և հեղափոխության ժամանակ վերջինի արդյունահանությունը նախապատերազմական շրջանի արդյունահանությունից շատ անցավ։

Ստորև բերած աղյուսակը ցույց է տալիս մեր հաջողությունները տորֆի արդյունահանության ասպարիզում։

Խորհրդային Ռուսաստանի հաջողությունները տորֆի արդյունահանության ասպարիզում։

1912 թվական . . . . . 75 միլիոն փութ

1913 . . . . . 81 » »

1914	թվական	.	101	միլիոն	փութ
1915	.	.	86	"	"
1916	.	.	83	"	"
1917	.	.	71	"	"
1920	.	.	93	"	"
1821	.	.	140	"	"
1922	.	.	129	"	"
1923	.	.	159	"	"
1924	.	.	193	"	*

Տնտեսության համար տորֆի հսկայական նշանակությունն աչքի յե ընկնում առանձնապես այժմ, Խ. Ս. Հ. Մ. ուժ լայն ելեկտրիֆիկացիան իրականացնելիս. ելեկտրական կայանների նշանավոր մասը տորֆի վառելանյութով բանացնելու հնարավորությունը, այն ել վերջինի զըտնը վաճած տեղում՝ (այս կայանների մի մասն այժմ տորֆով ե գործում. Լենինգրադում՝ «Կարմիր Նոյեմբերը» և «Մերձ-Մուկովյան Շատուրսկայան»), քարածխի և այլ տեսակի վառելանյութերի շատ միլիոններ մեզ կխնայի և դրա հետ միասին՝ տրանսպորտի բեռլ համեմատաբար կթեթևացնի:

Ընդումին տորֆի հսկայական առավելությունը (ուրիշ տեսակի վառելանյութերի հան-

\* Այս քանակից 156 միլիոն փութը Ժ. Տ. Գ. Խ. ձեռնարկների մշակությանն ե ընկնում, իսկ մնացածը՝ տնայնագործական մասը մշակության, վորը Հ. Ժ. կողմից և հաշվի առնվում:

դեպ) այն ե, վոր Խ. Ս. Հ. Մ.-ի կենտրոնական շրջաններում վերջինն առաստ ե, վորը թույլ ե տալիս Միության արդյունաբերական իսկ շրջաններում մի շարք ելեկտրոկայաններ կառուցել:

**ՎԱՐՎՈՂ ԹԵՐԹԱՔԱՐԵՐԸ** (сланцы).

Սապրոպել.

Հեղափոխության ընթացքում վառվող թերթաքարեր առաջ յեկան։ Այդ բառի տակ հասկացվում են լեռնային այն հայտնի տեսակները, վորոնք ձյութոտ նյութերով են հագեցած։ Իբրև վառելանյութ գործադրվելուց զատ, վառվող թերթաքարերը գնահատելի յեն նաև այն բանով, վոր նրանցից զանազան արժեքավոր մթերթներ՝ պարաֆֆին, բենզին, բուելու յուղեր, քացախաթթվուտ և սկիպիդար (դաթրան) կարելի յե պատրաստել և այլն։

Վառվող թերթաքարերը Խ. Ս. Հ. Մ.-ի տարբեր վայրերում են գտնվում, որինակ՝ Վեյմարն կայարանի մոտ (Լենինգրադից վոչ հեռու), ուր նրանցով Լենինգրադի ցեմենտի ու գազի գործարաններն են բանում։ Բայց նրանք առանձնապես շատ են Վոլգայի ափերում (Սիմբիրսկին, Սիզըրանին և Սամարային մոտիկ), ուր նրանք առայժմ փոքր չափերով են մշակվում և գործադրվում են իբրև վառելանյութ։ Բայց վառ-

վոզ յուղաքարելն այժմյանից առանձին նշանակություն են ձեռք բերում, վորովհետև այս յերկրում կառուցվող ելեկտրոկայանները նրանով պիտի բանեն:

Խ. Ա. Հ. Մ. ում պատահում են նաև ժողովրդի լայն խավերին անհայտ մի հանքի՝ սապուղելի հարուստ շերտեր, մի այլաձեռնություն, վորոնք գոյացել են լճի կամ ծովախորշերի հատակում, ինչպես և տորֆի հաստ շերտերի տակ։ Սապրոպելն ունի բարձր վառք (մինչև  $95^{\circ}/_0$  ածխածին ե պարունակում) և, բացի այդ, զտելիս՝ արժեքավոր մթերքներ (որինակ՝ պարաֆֆին, ամմիակ, քսելու յուղեր, ձյութ և այլն) կարող ե տալ։ Առայժմ նրա արտադրությունը դեռ չնշին ե ու տնտեսական նշանակություն չունի։ Սապրոպելից վերոհիշյալ մթերքները զտելու համար ներկայումս Աստաշկովում գործարան ե շինվում։

### ՄԱՐԳԱՆԵՑ.

Մարգանեցի հարստությամբ Խ. Ա. Հ. Մ. ու աշխարհում առաջին յերկիրն ե։ Մարգանեցի ամենահայտնի շերտերը Զիատուրում (Վրաստանի սահմաններում) են գտնվում։ Հետո մարգանեցով հարուստ հանքատեղերը Նիկոպոլի շրջակայքն ե (Յեկատերինասլավի նահանգ)։ Մարգանեցը պատահում ե նաև Ռւբալում։

Պողպատաձուլության արտադրության մեջ  
իբրև անհրաժեշտ նյութ մարգանեցը համաշխար-  
հային արդյունաբերության մեջ մեծ նշանակու-  
թյուն ունի։ Ինչպես մարգանեցի արդյունահա-  
նությամբ, այնպես ել նրա արտահանությամբ  
Ռուսաստանը համաշխարհային տնտեսության  
մեջ առաջին տեղն ե բռնում։ Նախապատերազ-  
մյան շրջանում Ռուսաստանում մարգանեցի ար-  
դյունահանությունը 76 միլիոն վիթի յեր հասնում,  
ըստվորում քիչ եր մնում վոր ամբողջովին ար-  
տահանվեր։

Պատերազմի ու հեղափոխության ընթաց-  
քում մարգանեցի արտահանությունը սաստիկ ըն-  
կավ. 1921 թ. միայն 0,4 միլիոն փութ ե ար-  
տահանված, 1922 գործառնական տարում՝ 2,4  
միլիոն, իսկ 1923 թ.՝ 4 միլիոն փութ։ 1921 թվից  
մարգանեցի արտահանությունը ևս վերականգնեց  
(0,2 միլիոն փութ ե արտահանված)։

1922 թվին նրանից արդեն 2,3 միլիոն փութ  
ե արտահանվել և մոտավորապես նույնքան ել  
1923 թվին։

## ԱԴ.

Աղի արդյունահանությամբ Ռուսաստանն աշ-  
խարհում յերրորդ տեղն եր բռնում, առաջին  
աեղը զիջելով Հյուսիսային Ամերիկայի Միա-  
ցյալ նահանգներին, ուր աղը կրկնակի չափով

ավելի յեր արդյունահանվում, քան Ռուսաստանում, իսկ յերկրորդը՝ Անգլիային, ուր աղի արդյունահանությունը մոտավորապես  $1\frac{1}{2}$  անգամով գերազանցում էր մերին:

Նախապատերազմյան շրջանում Ռուսաստանում մոտ 120—130 միլիոն փութ աղ եր արդյունահանվում: Այս քանակից մոտ 60 միլիոն փութը Բասկունչակին, Աղեսսայի ծովախորշերին ու Ղրիմին եր ընկնում (ինքնանիստ աղ) 30 միլիոնից ավելի՝ աղաքարին (Դոնի ավազան և Իլեցկ), մոտ 20 միլիոն նախկին Պերմի նահանգին (ծովային աղ), իսկ մնացածը՝ Յեվրոպական Ռուսաստանի մյուս շրջաններին ու Սիբիրին:

Ռուսաստանում ստացվող ամբողջ աղը միանգամայն բավարարում էր ընակչության աղի կարիքը, և վերջինն արտասահմանից մեղ մոտ միայն չնչին քանակությամբ եր բերվում, այն ել՝ Մուրման (ուր, տրանսպորտի ձեռնտվության պատճառով, արտասահմանյան աղը մերից ավելի գերազաս եր գնում):

Հեղափոխության ընթացքում աղի արդյունահանությունն սկզբից ընկավ, բայց հետո արագ բարձրացավ. 1919 թ. ընդամենը 13 միլիոն փ. աղ եր արդյունահանված, բայց 1920 թ.՝ արդեն 35, 1921 գործառնական տարում՝ 44, 1922-ին՝ 48, 1923 թ.՝ 63 և 1924 թ.՝ 61 միլիոն փութ:

## ՄՅՈՒՄ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ.

Նախապատերազմյան Ռուսաստանում արդյունահանվում ելին նաև արծիճ, ցինկ յեվ անազ (կլայեկ), բայց չնչին քանակությամբ. իսկ նրանց պահանջը գլխավորապես ոտար յերկըրներից բերածի հաշվին եր բավարարվում:

Բայց, թված հանածոներից բացի, Ռուսաստանում գտնվում են մի շարք հարուստ հանքատեղեր, վորոնք ամենենին ել պատշաճ չափերով չեն մշակվում (իսկ տեղ-տեղ ել բոլորովին չեն մշակվում): Այսպես, Ռուսաստանում ֆուֆորիտի, ազբեստի, գրաֆիտի, գլաուբերյան աղի, մազնեզիումի, ալեբաստրի, փայլաքարի, բոկսիտի (ալյումին), մարմարի և այլ շինարարական նյութերի, թանգարժեք ու զանազան ինքնազույն քարերի խոշոր հանքատեղեր կան: Բացի այդ, աշխարհում (Զեխո-Սլովակիայից ու Միացյալ Նահանգներից հետո) յերկըրդ յերկիրը Խ. Ս. Հ. Մ. Ն է, ուր ռադիումի հանքերն են գտնվում (Ֆերգանում, Թյույյա-Մույունի հոչակավոր հանքատեղերը):

Հնդկանըապես, անհրաժեշտ ե ասել, վորպատահած հանածոների կարողությամբ ու զանազանակերպությամբ, վորոնք դեռ ամենենին ել

հետազոտված չեն, Խ. Ս. Հ. Մ. Ա. աշխարհում  
ամենահարուստ յերկիրն ե, և մեր լեռնարդյու-  
նաբերության մեջ բացվող հեռանկարները դրա-  
կանապես անչափելի յեն \*:

---

\* Արտադրությունների հետ սքըրեիր դիավրամմա-  
ները (այս թվում և լեռնարդյունաբերությանը), դա-  
նագան տեսակի մոդելները, հանաձոնների նմուշները և  
այլն, կարելի յե տեսնել ԺՏԳԽ մշտական ցուցահան-  
դիսում (Պետրովկայում) և Պոլիտեխնիկումի թանդա-  
րանում:

### III

## «ՍՊԻՏԱԿ» ՈՒ «ԿԱՆԱԶ» ԱԾՈՒԻԽՆԵՐԸ\*.

Խ. Ա. Հ. Մ. Ջ. յերկրի յերեսի և ստորերկրյա հարստությունների վերաբերյալ մեր թռուցիկ ուրվագիծը լրիվ չի լինի, յեթե մենք չշոշափենք սպիտակ ու կանաչ ածուխները։ Խ. Ա. Հ. Մ. ու ժողովրդական տնտեսության ելեկտրիֆիկացիայի լայն ծրագրի իրականացումով, առանձին կարևոր նշանակություն ե ձեռք բերում յերկրի բավարար քանակությամբ սպիտակ (նույնպես և կանաչ) ածխի առկայությունը, վորովհետեւ յերկրի ապագա ամբողջ բարեկեցությունն այժմ զգալի չափով կախված ե ջրային ուժից։ Այս կողմից Խ. Ա. Հ. Մ. ն համաշխարհային տնտեսության մեջ թերևս առաջին ե բռնում։ Ստորև բերած դիագրամման ցույց ե տալիս գլխավոր յերկրների ջրային ուժն ու նրան ոգտագործելու աստիճանը։

\* «Սպիտակ ածուխ» բառի տակ հասկացվում է թափող ջրի եներգիան, որինակ՝ ջրվեժների, սահանքների, կամ ընդհանրապես ուժեղ զետերի. իսկ «կանաչ ածուխ» բառի տակ հասկացվում է մանր գետերից շարժվող ջրերի եներգիան (վորը վերջինների լճացման միջոցով ե ստացվում)։

ԱՇԽԱՐՀԻ ՅԵՐԵՍԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ  
ԶՐԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ.

(Մոտավորապես 1911—1913 թ.՝ թ., ձի հ. լի  
ուժելով)

ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՆԻՄ- ՆԵՐԸ	ՀԱՇՎԱԾ ԼԱՐՈՂՈՒ- ԹՅՈՒՆԸ	ՈԳՄԱԳՈՒ- ԾԱԾՔ	ՈԳՄԱԳՈՒԾ ԸՆՆ 0/0	ԵԱ 1915- 1916 թ. ոգ- ՄԱԳՈՒԾՄԱՆ ԼԱՐՈՂՈՒԹՅՈՒ- ՆԸ
Ռուսական . . .	20.000.000	989 000	5,05	—
Ասգլիա . . . .	963.000	80.000	8,3	—
Գերմանիա . . . .	1.465.000	445.000	31,3	—
Զվիցերիա . . . .	3.000.000	380 000	12,6	516.000
Մալանիա . . . .	5.000.000	300.000	6,0	364.000
Իտալիա . . . .	5.500.000	565.000	10,2	800.000
Փրանսիա . . . .	5.857 000	650 000	11,2	740.000
Ն.-Ավստրո-Հունգարիա	6.460 000	515.000	8,0	566.000
Շվեյցարիա . . . .	10.000.000	550.000	5,5	7.000.000
Նորվիգիա . . . .	7.500.000	920.000	12,3	1.120.000
Կանադա . . . .	17.764.000	1.013.000	8,2	—
Հ. Ա. Միացյալ Նահանգ.	26.736.060	4.016.000	15,0	7.000.000

Այս աղյուսակից յերեսում ե, վոր ջրի ուժի ընդհանուր քանակով առաջին տեղը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն են կանգնած (գրեթե 27 միլիոն ձիու ուժ), իսկ Ռուսաստանը՝ յերկրորդ տեղը (20 միլիոն ձիու ուժ). Ջրի ուժի ոգտագործման աստիճանը, մինչև 1914 թվականի պատերազմն ամենով, մինչև 1914 թվականի պատերազմն ամենով, գերմանիան եր կանգնած ( $31\%$ ), նից բարձր գերմանիան եր կանգնած ( $31\%$ ), իսկ առ 1916 թ. Շվեյցարիան, վորը 10 միլիոն

ձիու ուժից 7 միլիոնը, այսինքն՝ 70% ոգտագործել եր, բոլոր յերկրներից անցավ:

Սակայն հարկավոր են նշել, վոր Ռուսաստանի համար ջրային ուժի թիվը, վորը 20 միլիոն ձիու ուժ են հաշված, ամենենին ճիշտ չեն, վորովհետև Խ. Ա. Հ. Մ. ի առջակայքի ու Սիրիրի նշանավոր մասի շատ գետեր գումարի մեջ չեն մտել, այնպես վոր Խ. Ա. Հ. Մ. ի ջրային ուժի կարողությունը, հավանորեն, հաշվածից շատ բարձր են, և այս ասպարիզում Միությունն, անշուշտ, աշխարհում առաջին տեղն են բռնում: Այստեղից մենք տեսնում ենք, վոր Ջրային ուժերի ելեկտրիֆիկացիան Խ. Ա. Հ. Մ. ում այնպիսի հսկայական մասշտաբով կարող են իրականանալ, վորպիսին վոչ մի յերկրում:

\*  
\* \*

Մեր համառոտ ուրվագիծը յեզրափակելու համար մենք չենք կարող չնշել, վոր Խ. Ա. Հ. Մ. ում՝ պետական ելեկտրիֆիկացիայի ծրագրի իրականացումով (տեղականի հետ կապված), Միության վերոգրյալ բոլոր հարստություններն ամենալայն ու նպատակահարմար կերպով կարող են ոգտագործվել: Դրա հետ միասին մենք կըստանք նաև վառելանյութերի արժեքավոր շատ տեսակների ահազին ավելուրդներ, վորոնք մեր արտադրության խոշոր ավելացումն կարող են

ստեղծել։ Բանն այն ե, վոր ամեն մի ելէ հարուկենորոն, վորը ցըի ուժը կամ վառելանյութերի սակավարժեք տեսակներն (տորֆ, յուղաքար և այլն) անզամ առանձին ե ոգտագործում, հատուկ անելիքի կատարումից—տեղական արտադրության ու տրանսպորտի մեքենայացումից դատ, ածխի (կամ նավթի) աչքի ընկնող չափով տնտեսումն կտա։ Այսպես, որինակ՝ Վոլխովի հիդրոելեկտրոկայանը բանի ընկնելուց, Լենինգրադին տարեկան մոտավորապես 225 միլիոն կիլովատ-ժամ ուժ կարող ե տալ։ Բայց վորովհետեւ ամեն մի կիլովատ-ժամը 1 կիլոգրամ ածխի ծախս ե պահանջում, ապա, հետեւ վապես (ի նկատի առնելով ուժի կորուստը ճանապարհներին), Վոլխովի կայանը վոչ պակաս, բան 10 միլիոն փութ քարածխի տնտեսումն կտա։ Բացի այդ, տնտեսած այդ 10 միլիոն փութ ածուխն աշխատանքից կազատի տարեկան 10,000 վագոն, վորն իրականապես կթեթևացնի մեր յերկաթուղային տրանսպորտը, վորը ծանրաբեռնումից, մանավանդ վառելանյութի մեծածավալ բեռներից, մեզնում անչափ տուժում ե, Ել ավելի խոշոր տնտեսումն կըստացվի, յեթե Լենինգրադի շրջանում Սվիրի յերկու ելեկտրոկենտրոններ սպասարկել սկսեն։

Այժմ դժվար չի տեսնել, թե ամբողջ յերկրի համար տնտեսական ինչպիսի հոկայական

հեւկանքներ կստացվեն, յերբ Խ. Ա. Հ. Մ. ում  
յերկրի պետական ելեկտրիֆիկացիայի միայն  
առաջին ծրագիրը կատարվի, վորը 10—15 տար-  
վա ընթացքում 30 ելեկտրոկենտրոնի կառու-  
ցումն են նախատեսնում (27 ը՝ Խ. Ա. Հ. Մ. ի  
յեվրոպական, իսկ 3.ը՝ ասիական ժասում),

Յեվ այսպես, Խ. Ա. Հ. Մ.-ի ապագայի  
բարզավաճումը նշանավոր չափով կարագանա  
ելեկտրիֆիկացիայի միջոցով \*.

---

\* Խ. Ա. Հ. Մ.-ի ելեկտրիֆիկացիայի գաղափարի  
մանրամասն պարզաբանությունը կարելի յե դժուել  
ի. Ստեղանովի «Խ. Ա. Յ. Հ. Ելեկտրիֆիկացիան  
համաշխարհային տնտեսության անցողակի շրջանի  
հետեւանքով» գրքույկի մեջ ելեկտրիֆիկացիայի գա-  
ղափարի հետ համառոտ կերպով կարելի յե ծանոթա-  
նալ ճարտարապետ Բերգերի «Խ. Ա. Հ. Մ.-ի ժողովը ը-  
դական տնտեսության ելեկտրիֆիկացիան» ըրուշու-  
րից կամ պրոֆ. Պ. Գ. Տիմաֆեյևի «Խ. Ա. Հ. Մ.-ի տըն-  
տեսական աշխարհագրություն» յերկրների համեմա-  
տությամբ» գրքից, ուր գրքի վերջո «Խ. Ա. Հ. Մ.-ի  
Ելեկտրիֆիկացիան» վերտառությամբ հավելված կա:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		<i>b</i>
<i>Առաջաբան</i>	.	3
<b>I. Խ. Ս. Հ. Մ.-ի ՏԵՐԵՒՏՈՒԱՅԻ ՄԱԿԵՐԵՍԻ</b>		
<b>ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.</b>		
<b>1. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԸ.</b>		

<i>Հացահատիկները՝ հաճար, ցորեն, վարսակ, գարի</i>	6
<i>Պտղաբմատները՝ զետնախնձոր և ճակնդեղ</i>	18
<i>Տեխնիկական բույսեր՝ վուշ, կանեփ, բամբակ</i>	22
<i>Այգեգործությունն ու գինեգործությունը</i>	30
<i>Ծխախոտ</i>	35

<b>2. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԸ.</b>	
--------------------------------------	--

<i>Խոշոր յեղջերավոր անասուններ</i>	38
<i>Զիեր</i>	44
<i>Վոչխարներ</i>	49
<i>Խողեր</i>	54
<i>Հնտանի թռչնեղին</i>	59
<i>Մեղվարուծությունը</i>	63
<i>Շերամապահությունը</i>	65
<i>ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</i>	66
<i>Զկների հարստությունը</i>	72
<i>Աղվամորթ կենդանիները</i>	83

II. Խ. Ա. Հ. Մ. -ի ՍՏՈՐԵՐԿՐՅԱ  
ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ազնիվ մետաղները՝ վուկի, պլատին, արծոթ . . . . .	89
Յերկաթ . . . . .	95
Պղինձ . . . . .	99
Քարածուխ . . . . .	101
Նավթ . . . . .	108
Տորֆ . . . . .	113
Վառվող թերթաքարերը, սապրոպել . . . . .	116
Մարգանեց . . . . .	117
Աղ . . . . .	118
Մյուս հանածոները . . . . .	120
III. «ՍՊԻՏԱԿ» ՈՒ «ԿԱՆԱԶ» ԱՌՈՒԵՆԵՐԸ. . . . .	122
Յեղբակացություն . . . . .	124



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220038839

A 11  
38839

(SO<sub>K</sub>)



ԳԻՆԸ 40 ԿՈՊ.